2019, ՄԱՐՏ Ա, ԹԻՎ 5 (529)

Էջմիածնի Հայրապետական

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Քուսո խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնիս հայրապետական Մեր օրհնությունն ու սրտագին շնորհավորանքներն ենք բերում սիրելի տիկնայք եւ օրիորդաց՝ Մարտի 8-ի տոնական առիթով:

Գարնան այս բերկրաշատ տոնին բոլորիս սրտերը համակվում են ուրախությամբ եւ գերմ զգայուններով՝ դեպի մեր մայրերն եւ քույրերը: Անգնահատելի է ձեր դերն ու ավանդը, սիրելինե՛ր, ազգային, պետական ու հասարակական մեր կյանքում, եւ անփոխարինելի ձեր առաքելությունը՝ ընտանեկան հարկիս ներսս ու սերունդների դաստիարակության գործում:

Մեծարումի, գնահատանքի այս տոնական օրը Հայրապետիս մաղթանքն է, որ ամենախնամ Տերն Իր օրհնության ու շնորհների ներքո պահպանի ձեզ եւ կորակիս չինի ձեր առաքինի գործերին, որպեսզի բարի ընթացքով շարունակեք շուսավորել մեր ժողովրդի կյանքը, ուրախություն պարգեւեք ձեր ընկանիքներին՝ գերմությամբ, հոգատարությամբ եւ սիրո կապարյալ եվիրումով:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Ամենակալ Իր ամենապար Սուրբ Աղով միշտ հովանի չինի ձեզ եւ ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով խաղաղ կյանքի բարօր ու երջանիկ օրեր:

«Շնորհք, սեր եւ խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. Ամէն»:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

4 մարտի **Շիրակի նորանշանակ մարզպետին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Շիրակի նորանշանակ մարզպետ պրն Տիգրան Պետրոսյանին՝ ուղեկցությամբ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արք. Աջապահյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շնորհավորանքներն ու օրհնությունը բերեց մարզպետին՝ նշանակման առիթով:

Հանդիպման ընթացքում խոսվեց 1988 թ. երկրաշարժի աղետալի հետեւանքների եւ դրանց հաղթահարման ուղղությամբ գործադրվող ջանքերի մասին: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Շիրակի մարզի բնակչությունը, շնորհիվ իր հավատքի եւ զորեղ կամքի, կարողացավ ամուր եւ հաստատուն պահել իր ոգին: Նորին Սրբությունը կարեւորությամբ ընդգծեց, որ այսօր պետության կողմից աշխատանքներ են կատարվում, որպեսզի Գյումրիին վերադարձվի երբեմնի փառքը: Հայոց Հայրապետը փաստեց, որ Մայր Աթոռը մշտապես իր զորակցությունն է բերել Գյումրիին՝ տարբեր ծրագրերի միջոցով նպաստելով սոցիալական խնդիրների լուծմանը, ինչպես նաեւ մշակութային կյանքի զարգացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ Մայր Աթոռի եւ թեմի կողմից նախաձեռնված այդ ծրագրերը շարունակական կլինեն: Անդրադառնալով թեմի հոգեւոր կյանքի զորացմանը եւ հոգեւոր դասի ծառայությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ ընդգծեց, որ շիրակցիները միշտ առանձնացել են քրիստոնեական հավատի հանդեպ նախանձախնդրությամբ եւ իրենց եկեղեցասեր նկարագրով:

Իր հերթին նորանշանակ մարզպետը նշեց, թե որպես հայ մարդ եւ հայ քրիստոնյա՝ պատիվ է համարում գտնվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Պրն Տիգրան Պետրոսյանը Նորին Սրբությանը ներկայացրեց Շիրակի մարզի խնդիրները եւ առկա մարտահրավերները, անդրադարձավ մարզի զարգացման հեռանկարներին՝ այդ գործում կարեւորելով նաեւ համագործակցությունը Հայոց Եկեղեցու հետ:

Վերջում Գարեգին Բ Կաթողիկոսը ուժ եւ կարողություն մաղթեց մարզպետին՝ մարզի ժողովրդի բարօր ու շեն կյանքի կերտման գործում:

6 մարտի **Միացյալ աստվածաշնչային ընկերությունների ներկայացուցիչներին**

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Միացյալ աստվածաշնչային ընկերությունների թարգմանական ծրագրերի տնօրեն Մարինա Լոմովային եւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության թարգմանական ծրագրերի կոորդինատոր Մարիկա դե Լանգին՝ ուղեկցությամբ Հայաստանի աստվածաշնչյան ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը կարեւորեց միջազգային կազմակերպության՝ Աստվածաշունչ մատյանը աշխարհի տարբեր լեզուներով թարգմանելու եւ մարդկանց հասանելի դարձնելու առաքելությունը, ողջունեց Միացյալ աստվածաշնչային ընկերությունների եւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության միջեւ ձեւավորված երկարամյա համագործակցությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակությամբ հաստատեց, որ Հայաստանի աստվածաշնչային ընկերության գովարժան ծառայության, բազմաբնույթ ծրագրերի եւ հրատարակությունների շնորհիվ հայորդիներին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու Աստվածաշնչին, սուրբգրային գիտելիքներով հարստանալու եւ զորացնելու նաեւ իրենց կրոնական ապրումները:

Հյուրերն իրենց հերթին խորին շնորհակալություն հայտնեցին Նորին Սրբությանը՝ Հայոց Եկեղեցու զորակցության եւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության ակտիվ գործունեության համար:

Վերջում Գարեգին Բ Կաթողիկոսը մաղթեց, որ Աստված հոգեշահ նոր ձեռքբերումներով արդյունավորի Միացյալ աստվածաշնչային ընկերությունների գործունեությունը:

7 մարտի **ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդին**



ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստան ժամանած ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Դանիել վրդ. Ֆընտըգյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց հայր սուրբին՝ վերստին շնորհավորելով առաջնորդ ընտրվելու կապակցությամբ: Նորին Սրբությունը գոհունակությամբ հաստատեց, որ հայր Դանիելն իր բազմամյա նվիրյալ ծառայության շնորհիվ սիրված է հայ համայնքի կողմից եւ վայելում է ամենքի վստահությունը: Խոսելով հայ համայնքի կյանքում առկա խնդիրների եւ մարտահրավերների մասին՝ Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ աջակից ունենալով հոգեւոր դասին եւ հավատավոր հայորդյաց՝ հնարավոր կլինի դրանք հաղթահարել եւ ազգային-եկեղեցական կյանքը վերընթացի մեջ պահել: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւոր նկատեց, որ հովվական խնամքի ներքո մեր ժողովրդի զավակներն ապրեն ազգային-հոգեւոր արժեքներով, հավատարիմ մնան իրենց ինքնությանը եւ ծաղկեցնելով հայ համայնքը՝ իրենց օգտակար ծառայությունը բերեն ազգին, հայրենիքին եւ Եկեղեցուն:

Զրույցի ընթացքում ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդն իր որդիական սերն ու երախտագիտությունը հայտնեց Հայոց Հովվապետին՝ դեռեւս Մայր Աթոռում իր սարկավագության տարիներից սկսյալ իր նկատմամբ մշտապես ցուցաբերված հայրական խնամքի եւ վստահության համար՝ պատիվ նկատելով առաջնորդական հանգամանքում իր ծառայությունը Հայոց Եկեղեցուն: Հայր Դանիելը եւս անդրադարձ կատարեց թեմի եւ հայ համայնքի առջեւ ծառացած մարտահրավերներին՝ նշելով, որ իր ողջ ուժերն եւ կարողությունները պիտի ներդնի եւ ծառայեցնի ի պայծառություն Արեւելյան թեմի եւ ի բարօրություն հավատավոր ժողովրդի: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Աստծո զորակցությունը եւ հաջողություններ մաղթեց Դանիել վրդ. Ֆընտըգյանին՝ իր առաջնորդական առաքելության մեջ:

Շարունակությունը՝ էջ 2

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ Առաքելական Սուրբ Եկեղեցին Ս. Վարդանանց տոնն այս տարի նշեց փետրվարի 28-ին: Այս առիթով Պատարագի սրբազան արարողությունը մատուցվեց Ս. Գայանե վանքում:

Պատարագիչն էր Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը: Պատարագին ներկա էին թեմերում եւ Մայր Աթոռի կառույցներում սպասավորող եկեղեցականներ, բարերար հայորդիներ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաներ, բազմաթիվ ուխտավորներ:

Պատարագի ընթացքում Մուշեղ սրբազանն անդրադարձավ Ս. Վարդանանց տոնի խորհրդին եւ Ավարայրի ճակատամարտի ազդեցությանը հետագա հայոց պատմության վրա:

«Հայ ժողովրդի պատմության ոսկետառ էջերից մեկը կերտած հերոսներին ենք անդրադառնում այսօր, սիրելի՛ հավատացյալներ, եւ հիշատակում Վարդանանց սրբերին:

Մեր պատմությունը, ցավալիորեն, լի է օրինակներով, երբ մեծ ու զորեղ տերությունները, գայթակղվելով բիբլիական մեր երկրով, բազմիցս փորձել են գրավել այն եւ վերջ դնել հային ու նրա աստվածատուր ինքնությանը: Ինքնություն, որ սկիզբ է առել դեռեւս ազգերի ձեւավորման ակունքներից, զորացել հային հատուկ քաջարի ոգով, հարուստ մշակույթով ու լեզվով, եւ հետո էլ՝ Հայ Եկեղեցու ուսուցանած աստվածային ճշմարտությամբ: Դարեր ի վեր հայ ժողովուրդն իր սերունդներին կաթի հետ սնուցել է նաեւ հայրենիքի, Մայր Եկեղեցու եւ ազգային արժեքների հանդեպ սեր եւ սովորեցրել՝ հայապահպանությունը յուրաքանչյուր հայորդու սրբազան պարտականությունն է:

Վստահ եմ՝ հենց այս մշտամնա արժեքների մասին էին մտածում Տղմուտի ափին հավաքված Վարդանանց քաջարի հերոսները, երբ «իմացեալ մահն» աչքերի առաջ՝ նայում էին գետի մյուս ափին գտնվող՝ թվով իրենց գերազանցող բանակին, սակայն անմահության ձգտող հայի անկոտրում ու հերոսական ոգին՝ սնուցված Քրիստոսի աստվածային զորությամբ, ապրելու կամքով եւ արդարության ձայնը հնչեցնելու վճռականությամբ, անդրդվելի էր՝ մինչեւ վերջին շունչն ի սեր հայրենիքի պայքարելու եւ այդ հայրենիքում իր հավատքն ազատ դավանելու հավաքական որոշման մեջ»,– նշեց Մուշեղ եպիսկոպոսը՝ հավելելով, որ Ավարայրի ճակատամարտն առաջինն էր քրիստոնեության պատմության մեջ, երբ մի ժողովուրդ իր քրիստոնյա հավատքի ու համոզմունքների, իր հայրենիքի եւ ազատության համար ողջակիզվում էր կամավոր զոհաբերությամբ:

«Լույսի եւ խավարի պայքարն էր Ավարայրը: Հավերժության եւ ակնթարթի պայքարն էր Տղմուտի ափին: Խավարն ու ակնթարթը չկարողացան կասեցնել լույսն ու հավերժությունը: Եվ լույսը հորդեց, հավերժությունը հաղթանակեց եւ իր մեջ ընդգրկեց ժամանակն ամբողջ:

Ոտքի ելան քաջազուն հայորդիք ու փափկասուն տիկնայք՝ անկոտրում կամքով պաշտպանելու իրենց հավատը, լեզուն, նորաստեղծ բառ ու բանը, իրենց ողջ քրիստոնեական նոր մշակույթը՝ ազգի ինքնության առհավատչյան:

Մայր Եկեղեցին Ավարայրի դաշտում միայնակ չթողեց իր անձնվեր զավակներին. նրանց կողքին էր՝ ի դեմս կաթողիկոսի եւ ողջ հոգեւորականաց, որոնք ոչ միայն խոսքով էին քաջալերում, այլեւ ամրապնդում էին հոգեւոր սպառազինությամբ: Ճակատամարտին նախորդող գիշերը մկրտել էին բոլոր չմկրտվածներին՝ Տիրոջ Սուրբ Արյան ու Մարմնի ճաշակմամբ, Սուրբ Հոգու պարգեւած առատաբուխ շնորհներով զորացնելով հայրենանվեր քաջերին եւ ամրացնելով նրանց հավատի մեջ»,– ասաց սրբազանը՝ հաստատելով, որ հոգեւորականը գիտեր ոչ միայն աղոթքով զորացնել, խոսքով խանդավառել հայ շինականին ու հայ ծնողին՝ գութանից սուր ու վահան կռելու եւ զավակին հպարտությամբ ռազմի դաշտ ճանապարհելու, այլեւ գիտեր սեփական անձնազոհ օրինակով առաջամարտիկը լինել՝ խաչն ու սուրը ձեռքին:

Պատարագիչն ընդգծեց նաեւ, որ Ավարայրում հայը մեկընդմիշտ ապացուցեց, թե խաղաղ աշխատելու, ստեղծագործելու ու աղոթելու կողքին գիտի նաեւ կռվել, դիմադրել ու անհանդուրժողական ոգի ցույց տալ բոլոր նրանց, ովքեր փորձել են կամ կփորձեն հայոց փոքրիկ, սակայն ազատասեր հայրենիքը ստրկացնել: Ըստ նրա՝ Ավարայրը տեւեց մեկ օր միայն, սակայն մինչ օրս հպարտությամբ է հիշատակվում սերունդների կողմից՝ ռազմական դեպքից վերափոխվելով պատմական մեծ դասի, եւ փաստելով, որ ճշմարիտ Աստծով ամրապնդված մարդու ոգին անկոտրում է, եւ թեկուզ մարմինն էլ սպանվի, անմահ հոգին, միեւնույն է, հաղթանակում է:

Մուշեղ եպիսկոպոսը նշեց, որ Ավարայրի քաջալերող սխրանքն այսօր եւս շարունակում է ապրել մեր սրտերում եւ ամեն տեղ՝ աշխատանքում, գիտության, արվեստի, տնտեսության, մի խոսքով՝ ուզածդ բնագավառում: Այն ապրում է նաեւ սփյուռքում, ուր հայը գրեթե ամեն օր մղում է իր ավարայրը՝ հանուն հավատքի եւ հայության, որ չկորցնի իր ազգային դիմագիծը, որ հայ մնա եւ ապրի: Սրբազանը հաստատեց, որ այս նոր ավարայրների դեմ հաստատուն կամքով կանգնած է Հայոց Եկեղեցին եւ անխոնջ կատարում է հայապահպան իր առաքելությունը:

Հայրենի երկրի առջեւ ծառացած արտաքին մարտահրավերներից ելնելով՝ նա կարեւորեց, որ ազգային ու հոգեւոր արժեքները փոխանցվեն սերնդեսերունդ, որպեսզի մեր հերոս նախնիների նման հայորդյաց սրտերը ջերմեռանդ սիրով բաբախեն թե՛ հայրենիքի եւ թե՛ Հայոց Եկեղեցու համար:

Սրբազանը միաբանակից եղբայրների եւ հավատացյալների անունից շնորհավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ անվանակոչության օրվա կապակցությամբ՝ նշելով, որ հայոց եկեղեցիներում այսօր կատարվող Հայրապետական մաղթանքի ընթացքում ամենքը պիտի ծնրադիր աղոթեն բարերար եւ բազումողորմ Աստծուն՝ կոչման մեջ հաստատուն ու անսասան պահելու Հայոց Հայրապետին՝ շարունակելու հեզությամբ եւ ուղղափառ հավատով հովվելու իր հոգեւոր խնամքին հանձնված հայոց ածուին:

Տոնի առիթով սրբազան հայրն իր շնորհավորանքներն ուղղեց նաեւ Վարդանանց սրբերի անունները կրող հայորդիներին՝ մաղթելով, որ Տիրոջ ողորմությամբ բոլորը Վարդանանց ոգու շնորհընկալը լինեն:

Սուրբ Վարդանանց պայծառ հիշատակի առջեւ խոնարհումով եւ բարեխոսության հայցմամբ Մուշեղ սրբազանը խաղաղություն եւ անդորրություն մաղթեց երկրին հայոց եւ համայն աշխարհին:

Սրբազան արարողության ավարտին, նախագահությամբ Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Ոսկան արք. Գալփաքյանի, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության անսասանության եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենաց արեւշատության համար:

Ս. Վարդանանց տոնին նվիրված հանդիսություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Նույն օրը Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ Ս. Վարդանանց զորավարների տոնին նվիրված հանդիսություն: Միջոցառմանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաներ, հայաստանյան տարբեր կրթական հաստատությունների ուսանողներ եւ զինվորականներ:

Ցերեկույթը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո հնչեցին ՀՀ եւ ճեմարանի օրհներգերը: Բացման խոսքով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը:

Անդրադառնալով օրվա խորհրդին՝ հայր սուրբն ի մասնավորի նշեց. *«Երեւանի պետական համալսարանի հետ համատեղ կազմակերպվող այս ավանդական դարձած միջոցառումը գալիս է վկայելու, որ Վարդանանց սխրանքն այսօր էլ պատգամ դարձած կենսանորոգումի առիթ է մեզ համար:*

Շարունակությունը՝ էջ 3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

8 մարտի **ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողներին**

Սկիզբը՝ էջ 1

ԱՄԵՆԱՅՆ Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսանողներին՝ գլխավորությամբ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի եւ քոլեջի պետ գնդապետ Վարդգես Ներսիսյանի: Կրթահամալիրի սաներին ուղեկցում էին Կոտայքի թեմի եւ ՀՀ ոստիկանության հոգեւոր առաջնորդ Առաքել արք. Քարամյանն ու ՀՀ ոստիկանության հոգեւոր առաջնորդի օգնական Վրթանես քհն. Բաղումյանը:

Առաքել սրբազանը, ներկայացնելով Սուրբ Էջմիածին այցի նպատակը, ինչպես նաեւ կրթահամալիրում հոգեւոր առաջնորդության կողմից իրականացվող աշխատանքները, հայցեց Նորին Սրբության հայրապետական օրհնությունը եւ պատգամը երիտասարդներին:

Իր հերթին կրթահամալիրի պետ գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ ընդունելության եւ հայրական օրհնությանն արժանացնելու համար՝ կարեւորելով նմանօրինակ այցերը եւ շփումը Ամենայն Հայոց Հայրապետի հետ: Կրթահամալիրի տնօրենությունը գոհունակությամբ ընդգծեց ուսումնական հաստատություն պարբերաբար այցելող հոգեւորականների բարերար ազդեցությունը, որով հնարավորություն է ընձեռվում օրենքի ապագա պահապաններին հաղորդ դառնալու Հայ Եկեղեցու պատմությանը, դավանանքին, հոգեւոր ժառանգությանն ու արժեհամակարգին: ՀՀ ոստիկանության հոգեւոր առաջնորդությունը ստեղծվել է 2012 թ.՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ:

Այնուհետեւ ՀՀ ոստիկանության ակադեմիայի ու քոլեջի ուսանողներին եւ ղեկավար անձնակազմին ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ուրախություն հայտնելով Մայր Աթոռ նրանց այցի առիթով: Նորին Սրբությունը նաեւ ողջունեց ուսանողների որոշումը՝ իրենց օգտակարությունն ազգին եւ հայրենիքին բերելու ոստիկանության շարքերում:

Վեհափառ Հայրապետը կարեւորեց ոստիկանության առաքելությունը հասարակական կյանքում օրենքի պահպանության գործում՝ շեշտելով, որ նաեւ ոստիկանի անաչառ, բարեխիղճ ծառայությամբ է պայմանավորված հայրենիքի ապահով ու բարօր կյանքի ընթացքը: Նորին Սրբությունը նշեց, որ շնորհիվ ոստիկանության աշխատանքի՝ օրինահարգությունն ամրորեն պետք է դրոշմվի մեր ժողովրդի գիտակցության մեջ: Ոստիկանության դժվարին ծառայության մեջ Հայոց Հայրապետը շեշտեց նաեւ սիրո գործոնի կարեւորությունը, որը պետք է դրսեւորվի դիմացինի նկատմամբ:

Հանդիպմանը Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Առաքել սրբազանին եւ նրա իշխանության ներքո գործող հոգեւորականաց դասին՝ կրթահամալիրի ուսանողության նկատմամբ դրսեւորվող հետեւողական հոգեւոր խնամքի համար:

Վեհափառ Հայրապետն այցի առիթով իր բարեմաղթանքները փոխանցեց ուսանողներին, որ հաջողությամբ ավարտին հասցնեն կրթական գործընթացը եւ իրենց անձերը պատրաստեն կարեւոր ծառայության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կանանց տոնի կապակցությամբ նաեւ իր շնորհավորանքներն ուղղեց ներկա ուսանողուհիներին: Հայոց Հայրապետը, անդրադառնալով հայ կնոջ կերպարին, դերին եւ առաքելությանը մեր ժողովրդի կյանքում, նշեց, որ ազգի ներկան ու ապագան կերտվում են հայ կնոջ ձեռքերի մեջ, որովհետեւ հայոց մայրերն են կրթում ու դաստիարակում մանուկներին, նրանց շնորհիվ է հայորդիների մեջ դրոշմվում ազգային ինքնության ու գիտակցության շունչը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Բարձրյալի օգնականությունն ու Սուրբ Հոգու առաջնորդությունը հայցեց կրթահամալիրի սաներին եւ պատասխանատուներին իրենց հանրօգուտ առաքելության մեջ:

Ի Տեր հանգավ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանը

ԼՍՈՐ ցավով հայտնում ենք, որ մարտի 8-ին վախճանվեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանը: Մեսրոպ Պատրիարքը վերջին տարիներին տառապում էր ծանր հիվանդությամբ եւ գտնվում էր Պոլսի Սուրբ Փրկիչ ազգային հիվանդանոցում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները եւ ողջ հոգեւոր դասը սգում են Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի մահը եւ վշտակցում Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության հոգեւոր դասին ու պոլսահայությանը՝ աղոթելով երջանկահիշատակ Մեսրոպ Պատրիարքի հոգու հանգստության եւ խաղաղության համար:

Պատրիարք հոր հուղարկավորության արարողությունների մանրամասների վերաբերյալ կտեղեկացվի հաջորդիվ:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Մարտի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, Ս. Գայանե վանքում մասնակցեց Պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռի վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը:

Հավարտ Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ Մեսրոպ արք. Մութաֆյանի համար: Արարողությանը ներկա էին փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, պետական այրեր, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ:

Ներկա հոգեւոր դասը եւ հավատավոր ժողովուրդն աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ հոգելույս Մեսրոպ Բ Պատրիարքի հոգու խաղաղության եւ հանգստության համար:

Հոգեհանգստից հետո Նորին Սրբություն Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի վախճանման առիթով իր հայրական խոսքն ուղղեց ներկաներին: Վեհափառ Հայրապետը մասնավորապես ասաց.

«Հոգեւոր հայրեր եւ սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Այս պահին վիշտ է մեր հոգիներում Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանի վախճանման տխուր առիթով: Սգակիր մեր սրտերի համար ցավ է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակյալ հոգեւորականի մահը, մեկնումն այս տեսանելի աշխարհից:

«Հաւատովք ճանաչէ՛լ զնա, եւ զզօրութիւն յարութեան նորա, եւ զհաղորդութիւն չարչարանաց նորա, կերպարանակի՛ց լինել մահու նորա» (Փիլիպ. 3.10),– ասում է առաքյալը: Մեր Տիրոջն ու Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին հավատացողներն աստվածանմանության ուղիով են ընթանում ոչ միայն այս երկրավոր կյանքի, այլեւ մահվան ճանապարհին, քանզի առաքելական խոսքի համաձայն՝ կերպարանակից ենք լինում նաեւ Փրկչի մահվանը՝ հարության եւ հավիտենական կյանքի անխորտակելի հույսով: Հարության տերունական շնորհն է, որ պարտության է մատնում մահվանը եւ Երկնքի Արքայության դռները բացում նրանց առջեւ, «որք հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցին»: Մխիթարական այս գիտակցությամբ ենք այսօր հրաժեշտ տալիս սիրելի Պատրիարք Սրբազանին:

Հիրավի, ծանր է կորուստը, եւ սուգի մեջ են Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության պատմական Աթոռը, Պատրիարքության Մեր հավատավոր զավակները, համայն Մեր հավատավոր ժողովուրդը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Լուսահոգի Պատրիարքը մեր Սուրբ Եկեղեցուն եւ ժողովրդին ամբողջանվեր ծառայության ուխտ կնքեց ավելի քան չորս տասնամյակներ առաջ՝ կուսակրոն քահանայության սպասավորությունը ստանձնելով: Նա բանիմաց հոգեւորական էր, որ դեռեւս երիտասարդ տարիներից իր ուսումնատենչ հոգում ամբարեց գիտելյաց պաշարներ եւ ուսանելով փիլիսոփայություն ու աստվածաբանություն Միացյալ Նահանգներում եւ ապա Երուսաղեմում՝ վերադարձավ նոր եռանդով ու կորովով ծառայություն բերելու Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ավանդապահ եւ քրիստոսասեր Մեր բարեպաշտ զավակներին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հայոց հոգեւոր կենտրոնում, եպիսկոպոսական ձեռնադրությունից տարիներ անց Մեսրոպ Սրբազանը ստանձնեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության նվիրական Աթոռի առաջին սպասավորը լինելու առաքելությունը: Պատրիարքական իր պատասխանատու եւ երբեմն դժվարին գործունեության ողջ ընթացքում նա եղավ ծառայանվեր մշակ, որ եռանդուն սպասավորությամբ ջանում էր զորեղ ու միասնական պահել Թուրքիո հայ համայնքը, աշխույժ՝ Պատրիարքության ազգային-եկեղեցական կյանքը, ազգային-մշակութային կազմակերպությունների եւ կրթական հաստատությունների կարեւոր գործունեությունը: Ավա՜ղ, հիվանդությունը տկարացրեց սիրելի Պատրիարքին, տարաժամ բերեց «զհաղորդութիւն չարչարանաց», եւ վաղահաս մահվամբ իր վերջին հանգրվանը փոխադրվեց Պատրիարք Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանը:

Մենք այսօր աղոթական ոգով ուղեկցում ենք վախճանյալ Պատրիարքին դեպի հավերժական կյանքի ճանապարհ: Նա ննջեց այս աշխարհում, սակայն հառնելու է երկնային լուսեղեն օթեւաններում, ուր պիտի լսի Աստծո նվիրյալ ծառաներին առ Քրիստոս կանչող ձայնը. «Արի՛ որ ննջեսդ, եւ կանգնեա՛ց ի մեռելոց, եւ լուսաւորեսցէ զքեզ Քրիստոս» (Եփ. 5.14):

Ի խորոց սրտի հայցում ենք առ Ամենողորմ Տերը, որ երկնային բարձունքներում խաղաղության եւ հանգստության մեջ ընդունի հոգին հավատարիմ Իր սպասավորի՝ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանի, եւ Սուրբ Հոգու մխիթարությունը շնորհի մեզ ամենքիս, սգացյալ տիրամորը, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության սիրելի Մեր զավակներին, մեր հոգեւոր դասին, վշտացյալ հավատավոր Մեր ժողովրդին:

Աղոթք եւ օրհնություն Մեսրոպ Պատրիարքի լույս հիշատակին»:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 2

Ազգային ինքնությունը մեր օրերում երբեմն կարող է դիտարկվել որպես սոսկ ավանդությանը կառչած լինելու իրականություն: Սակայն Վարդանանց բովով անցած մեր ազգի պատմությունը մեզ ուսուցանում է, որ մենք ունենք պատասխանատվություն մեր նախնյաց կատարած հերոսության առջեւ. այդ պատասխանատվությունը հային հայ դարձնող իր քրիստոնեական արժեհամակարգով ապրելն է, որի մեջ պարզ ուղենշված են ժամանակակից մարդու, երիտասարդի համար այդքան թանկ ազատության եւ իրավունքների իրացման ամենից տեսանելի ուղիները:

Հետաքրքրական է, որ հայերիս ամենից նվիրական իղձերը կապված են ոչ թե անհատական բարօրության գաղափարի, այլ համընդհանուր կյանքի ծաղկման ու զորացման հետ: Մի ազատություն, որի գերնպատակն է լոկ անհատի բարեկեցությունը եւ շահը, մի ազատություն, որ զերծ է այլոց հանդեպ հանձնառությունից, եւ մի ազատություն, որ եթե չունի սեր ու հայրենասիրություն, չի կարող համահունչ լինել տասնհինգ եւ ավելի դարեր առաջ մեր ազգի մեջ արմատավորված արժեքներին եւ հանուն այդ արժեքների՝ նրանց թափած արյանը: Դավիթ մարգարեն, եղբայրների մեջ միասնությունը դրվատելով, այն համարում է մեծապես բարի եւ վայելուչ: Մեր պատմության հերոսական բոլոր անցքերը տեղի են ունեցել հենց այդօրինակ միասնականության շնորհիվ, որ այսօրվա Վարդանանց խորհրդով վերահնչում է որպես հաղթանակի հասնելու միակ բանալի: Ազգայինն ու հոգեւորը Վարդանանց օրինակով միածուլվում են եւ կերտում մեր ինքնությունը, որ ամենից զորեղ զենքն է մեր: Հիշենք, որ պատերազմները տեղի են ունենում զենքերի օգնությամբ, սակայն դրանցում հաղթում են մարդիկ: Առաջնորդող մարդկանց եւ նրանց հետեւող մարդկանց ոգին է, որ հասնում է հաղթանակի»:

Հայր Գարեգինը փաստեց նաեւ, որ իր հիմնադրումից ի վեր Առաքելական Սուրբ Եկեղեցին եղել է կրողն ու փոխանցողը, ինչպես եւ երաշխավորողը հայոց ազգի կյանքում աստվածային շնորհների ու առաքինությունների կենսագործման, եւ հայոց հայրապետներն ու վարդապետներն իրենց օրինակով ցույց են տվել, որ քաջ ու անվեհեր հավատքով մարդն այն մարդն է, որը համբերում է մինչեւ վերջ՝ անկախ բոլոր փորձություններից ու պատուհասներից:

Վերջում հայր սուրբը ներկաների անունից իր շնորհավորանքները փոխանցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ անվանակոչության ուրախալի օրվա առիթով, մաղթելով, որ Նորին Սրբության՝ Հայ Եկեղեցու զորացման հետ կապված բյուրավոր տեսիլքներից շատերը կյանքի կոչվեն, որպեսզի համայն հայոց ազգն ի Հայաստան եւ ի Սփյուռս նրա միջոցով Սուրբ Էջմիածնից բերվող լույսով ու զորությամբ ամուր մնա իր հավատքի, անսասան՝ ազգային իր նկարագրի մեջ, եւ մշտապես հառած լինի իր հայացքը դեպի արարիչ Տերը, դեպի իր Սուրբ Եկեղեցին եւ դեպի սրբազան երկիրն Արարատյան:

Հանդիսության մասնակիցներին իր ողջույնի խոսքը հղեց նաեւ ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների եւ հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտոր, տ. գ. թ., դոցենտ Ռուբեն Մարկոսյանը:

Ս. Վարդանանց սխրանքի մասին բանախոսությամբ հանդես եկավ Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի դասախոս պ. գ. թ., դոցենտ Միքայել Մալխասյանը:

Միջոցառման ընթացքում Վարդանանց խորհրդին նվիրված հոգեւոր ու հայրենասիրական երգերով ելույթ ունեցան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Երեւանի պետական համալսարանի երգչախմբերն ու «Նարեկացի» նվագախումբը:

Ցերեկույթն ամփոփվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանի պատգամով ու օրհնությամբ: Խոսելով Ավարայրի ճակատամարտի խորհրդի մասին՝ Նաթան սրբազանն ընդգծեց, որ, ցավոք, մեր ավարայրը չի ավարտվել, այն շարունակվում է ամեն վայրկյան, ամեն ժամ, ամեն օր, շարունակվում է այսօր՝ հենց մեր կյանքի մեջ:

«Ավարայրի խորհուրդը հավիտենական է մնում մեզ համար, քանի դեռ վերջնական հաղթանակը չկա իրական քրիստոնեության: Ոչ թե ձեւական քրիստոնեության, ոչ թե, որ կանգնեն ինչ-որ տեղ եւ դեմքերը խաչակնքեն կամ ասեն՝ մենք հայ քրիստոնյա ենք, ո՛չ: Հայ քրիստոնյան այն զինվորն է, որ իր կյանքն ամեն վայրկյան վտանգում է իր ժողովրդի, իր հայրենիքի եւ, առաջին հերթին, իր Աստծու համար»,– նշեց Նաթան արքեպիսկոպոսը՝ մաղթելով, որ հայ ժողովուրդը տեսնի մերօրյա ավարայրի իրական հաղթանակը:

Հանդիսությունն ավարտվեց Պահպանիչ աղոթքով:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՄԱՀՎԱՆ ՖՈՒԳԱ

Բ. Նահապետի մահվան ֆուգան

Սկիզբը՝ թիվ 2, 4

Այսպես հյուսվում է զարմանքը. նախակրթարաններում պաշտոնական ուսուցման դասագրքերում նրան նկարագրում էին «որպես արտասովոր չափերի մի նահապետ, որը երբեք դուրս չի գալիս պալատից, քանզի դռները ցածր ու նեղ են նրա համար»: Այսպես հնարամիտներն ապակե շշի մեջ վարունգ են աճեցնում. ծաղիկը ներս են մտցնում, ուր եւ մեծանում է: Պատմում են նաեւ, «թե շատ է սիրում մանուկներին ու ծիծեռնակներին, հասկանում է որոշ կենդանիների լեզուն, նախագուշակում է բնության տարերային երեւույթները, միայն աչքերին նայելով՝ կարողանում է մարդկանց մտքերը կարդալ...» (էջ 50), տիրապետում է բորոտներին բուժելու եւ անկյալներին ոտքի հանելու գաղտնիքին. այնպես, ինչպես Քրիստոսը: Նրա ծագումնաբանությունը բոլորին անհայտ է, քանի որ բոլոր մատյաններից վերացրել է հետքերը. ճիշտ այնպես, ինչպես Ստալինը: Ըստ նախանշանների՝ իշխելու անհագուրդ ծարավը, մշտամռայլ բնույթը, ոգու անբացատրելի չարությունը, կառավարման կերպը, ենթադրություններ են անում որտեղացի լինելու մասին: Նաեւ ենթադրվում է, որ նա իր հարյուրավոր կանանցից հինգ հազար երեխա է ունեցել՝ «եւ բոլորն էլ օրապակաս», եւ բոլորն էլ զուրկ հայրական անուն-ազգանունից, բացի մեկից, որը ծնվել էր օրինականացված կնոջից՝ Լետիսիա Նասարենոյից:

Անգլիացիների ծովային հետեւակը նրան բարձրացնում հասցնում է նախագահական պալատ, ուր եւ նրա բաժինը դարձան մենության թաքուն պահած դառը արցունքները: Այդ մենությունից ելք էր որոնում՝ մութ անկյուններում սպասուհիների հետ ոտքի վրա մերձենալով, որի ուղեկիցը նրա ծանր փնչոցներն էին ու շնային վնգստոցը:

Ժանտախտի բռնկումից վախեցած գաղութարարների հեռանալուց հետո նա դառնում է երկրի միանձնյա ղեկավար՝ վերականգնում է աքլորամարտերը եւ աղքատների նախասիրած մի քանի այլ զվարճություններ, իսկ ինքը «ճղփալով լող էր տալիս բարեկեցության ճահիճում» (էջ 54):

Միակը, որի առջեւ սիրտը բացել է, մայրն էր: Մայրը թռչուններ՝ պիրոլներ է ներկում վաճառքի համար, իսկ որդին պատմում է իր հաջողությունների մասին, հիշում, թե ինչպես տապալեց բռնակալ Լաոտարիո Մունյոսին, որը նաեւ բանաստեղծ էր:

Իշխանությունը հասունացնում է հայրենիքի գաղափարը՝ ծածանելով հայրենասիրության դրոշակը, որի համար թեեւ շատերն են պատրաստ մտնելու, «քանզի անհերոս հայրենիքը նույնն է, ինչ անդուռ տունը», բայց նաեւ հայրենիքը հենց ապրելն է:

Գեներալների առատություն է, այլ կերպ՝ տեղատարափ, որից «վառոդի մի քուլա է իջնում աշխարհի լռության վրա» (էջ 61), որպեսզի առանձնանա գլխավոր գեներալը, որին պիտի դիմեն՝ իմ գեներալ, եւ որի առաջ պիտի չոքեն մնացած գեներալները: Բռնություններին հաջորդող արյան տեսարաններ են, պատերից արյուն էր ծորում, գորգերից արյուն էր չոռում, միջանցքներով ու աստիճաններով արյուն էր հոսում: Ահա, սա էր իշխանությունը, որ վերածվել էր քաղաքացիական պատերազմի, մի այլ տարբերակով՝ հայրենական պատերազմի՝ ընդդեմ հնդկացիների:

Գեներալների առատությունն արժեզրկում է նրանց, որովհետեւ գահընկեց արվելու դեպքում «գոնե երգել իմանայիր կամ արքեպիսկոպոս լինեիր, կամ ծովագնաց, իսկ դու ընդամենը գեներալ ես» (էջ 64): Սա մոր մտահոգությունն է, մինչդեռ այս գեներալին հավերժությունն էր սպառնում: Մոր խրատները թշվառությունից աչք բացածի դատողություններ են, որ մտածում է վատ օրվա մասին՝ «պետական ծախսերից ավելացած փողը թաղիր մի ապահով տեղում, որ քեզանից բացի ոչ ոք չկարողանա գտնել» (էջ 64), քանի որ կա հանկարծակի փախուստի դիմելու թաքնված վտանգ:

Բայց ինչո՞ւ հարյուր տարվա իշխանություն. այնո՛ւ, որ իշխանավորների կամքը հնարավորինս երկար իշխելն է, իշխել անվերջ, այնքան, որ իրենց հասակակիցները մեռնեն, եւ իրենք հաստատեն իրենց անքննելի ճշմարտությունը: Այդ հարյուրամյա իշխանությունը, սակայն, ոչ միայն փառք է, այլեւ անեծք՝ իշխանության անեծքը՝ բոլորից առանձին, միակ ու միայնակ:

Հարյուրն անց նահապետը մշտապես հիշողության ցնորքների մեջ է. մտքի մեջ մեկը գալիս է, մեկը գնում է: Ամեն անգամ ննջարանի դռան երեք լինգերը, երեք մղլակներն ու երեք սողնակները գցելուց հետո նա մատնվում է հարյուրամյա միայնության, եւ հիշողության անդունդներից հառնում են ցնորքները: Ցնորքների մեջ է իր մատուտակաբույր բնական շնչով Մանուելա Սանչեսը, որն «իր կամոք մտնում-ելնում էր պատերի միջով» (էջ 69): Տեսիլքը խորանում է, եւ գեներալը տեսնում է, «թե ինչպես է երկինք հասնում Մանուելա Սանչես մոխրակապույտ երեքշաբթին» (էջ 73): Նա երկնքում տեսել էր «հավերժության վիհը եւ փորձելով կառչել կյանքից՝ ձեռքը պարզեց դատարկության մեջ...» (էջ 83): Ասես Ռեմեդիոս Գեղեցկուհու համբառնման տեսարանը լինի «Հարյուր տարվա մենությունից»:



Հերթական դրվագում նորից գեներալի մահվան տեսարանն է, բայց սկզբից եւեթ այնպիսի շփոթ է ստեղծվում, որ իրականը դառնում է անիրական, առկան՝ հեռակա, փաստականը՝ երեւակայական: Ահավասիկ երրորդ դրվագի մուտքը. «Ահա հենց այդպես էլ գտան նրան իր աշնան նախաշեմին, երբ դիակն իրականում Պատրիսիո Արագոնեսինն էր, եւ դարձյալ նույն ձեւով գտան շատ տարիներ անց, անորոշությունների այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ոչ ոք չէր կարողանում ակնհայտն ընդունել եւ հավատալ, որ անգղերի բզկտած եւ ծովի հատակի մակաբույծներով վարակված այդ զառամ մարմինը նրանն էր» (էջ 83): Զառամությունն ու կառավարական տան թափթփված վիճակը հաճախակի ակնարկվող իրողություններ են, որ պատմողների կողմից ճեղքվում եւ շարադրանքի մեջ են հորդում անցյալի հիշողությամբ: Ահա դրանցից մեկը. Դիոնիսիո Իգուարանի աքլորը մարտի ժամանակ կտցահարելով գլխատում է իշխանության մոխրոտ աքլորին:

Իշխանության աքլորը նախորդներին «հաղթել» էր, որովհետեւ նախորդները «վարժեցված էին պարտության»: Մինչդեռ վերջին դեպքն անակնկալ էր: Գեներալը շնորհավորում է տիրոջը, տերը, գիտակցելով կատարվածը, հայտարարում է. «Աքլորը Ձերն է, գեներալ», դրա դիմաց գեներալը նրան է տալիս վեց ցեղական աքլոր: Կարծես ամեն ինչ խաղի սահմաններում է, բայց նույն գիշեր դժբախտ Դիոնիսիո Իգուարանը կախվում է ցանցաճոճի պարանով՝ շատ լավ գիտակցելով, որ գեներալի աքլորի պարտությունն իր կյանքի վերջն էր:

Նրա իշխանության տարիների դրվագները հաջորդում են մեկը մյուսին: Ահա նրա սեռական հաճույքին արժանացած կանանցից մեկը, որի հետ գործողությունը կատարվում է անակնկալ՝ ոտքի վրա, եւ ահա այդ կնոջ արձագանքը. «Այնքան շշված էր, որ ես հազիվ գլխի ընկա, թե երբ մի կերպ իր գործը տեսավ եւ սկսեց լաց լինել մեծ ու միայնակ որբուկի մեզի նման տաք արցունքներով, եւ այնքան խոր մորմոք կար այդ լացի մեջ, որ ես խղճացի...» (էջ 97–98): Սա եւս գեներալն է, սա եւս հանուն հայրենիքի մեռնելու պատրաստակամության առջեւ «հայրենիքը հենց ողջ լինելն է» պատգամն է:

Երկրի քաղաքական ու դիվանագիտական կյանքի առօրյան ներծծված է կենցաղի ու կենսաբանության մեջ: Այդ ամենը եկել են ու անցել, այդ ամենը նրան հարյուրամյա իշխանություն են պարգեւել, ուրեմն էական են ոչ թե երկրի պատմության համար, որ հասցված է նվազագույնի, այլ իր անձի համար, որ ներկայացվում է առավելագույնով:

Շարունակությունը՝ էջ 7



Սկիզբը՝ 2018-ի թիվ 23–24, 2019-ի թիվ 1, 4

ՀԱՅՐ ԱՆԴՐԵԱՍ ԿՈՆԱՆՈՍ ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻՆ

«Անտեսանելի անցումներ» ռադիոհաղորդումներից

Այցելիր նաեւ բանտարկյալներին, մտիր բանտերը, ուր մուտքն արգելված է, եւ այցելության ժամերը՝ սահմանափակ: Աղոթքի համար ոչ մի արգելք չկա, աղոթքով կարող ենք գնալ, ուր որ ուզում ենք, կարող ենք նստել տանջված բանտարկյալի խցում, ինչքան որ ուզում ենք: Այցելենք եւ անարդարացիորեն, եւ արդարացիորեն բանտարկված մարդկանց: Այնքա՜ն ենք ուրախանում, երբ մեկն արդարացիորեն պատժվում է եւ բանտ ընկնում: Ինչո՞ւ: Մենք էլ մեղավոր մարդիկ չե՞նք: Մենք էլ այլ հարցերում ենք մեղավոր: Բոլորս էլ մեղավոր ենք, թեկուզ եւ լինենք բանտից դուրս: Մեկն ասում է. «Այնքան ուրախ եմ, որ այս մարդը վերջապես պատժվեց ու բանտ ընկավ: Արդարությունը հաղթեց, վրեժս լուծեցի»: Բայց այդպես որ խոսում ես, արդեն դու էլ բանտի ես արժանի: Քո վրեժխնդրության զգացումն արդեն բանտի արժանի մեղք է Աստծու համար: Չէ՞ որ Քրիստոս ասում է. «Սիրեցեք ձեր թշնամիներին» *(Մատթ. Ե. 44)*: Քանի՜-քանիսն են մեզնից մարդասպանություններ գործում իրենց մտքում, ծեծում մարդկանց, վիրավորում, վշտացնում: Թեկուզ եւ իրականում չգործենք այդ մեղքը, բայց Աստված, միեւնույն է, տեսնում է մեր սիրտը, միտքը, հոգին, տեսնում է, թե ինչքան մեղավոր ենք եւ բանտի արժանի: Մինչդեռ բազմաթիվ մարդիկ կան, որ գտնվում են բանտում եւ այնտեղ խոնարհեցրել են իրենց անձը, ներողություն խնդրել եւ ներում ստացել Աստծուց, թեկուզ եւ իրենց երկրի դատարանների կողմից դեռեւս ներված չեն:

Աղոթի՛ր, ուրեմն, այդ մարդկանց համար: Եվ դուք, որ հիմա մեզ բանտից եք լսում, աղոթե՛ք այն բանտարկյալների համար, որոնք չեն հասկանում այն, ինչ որ դուք եք հասկանում: Դուք, բանտարկյալ լինելով հանդերձ, զգում եք այսօր սուրբծննդյան լույսը, սիրում Քրիստոսին եւ ուժ ստանում: Կան շատ բանտարկյալներ, որ ողջ լինելով հանդերձ՝ դժոխքում են գտնվում, որովհետեւ կորցրել են ամեն հույս կյանքի հանդեպ: Դուք մեծ առավելություն ունեք նրանց նկատմամբ: Սոլժենիցինն ասում էր. «Բանտի մեջ հասկացա՝ ինչ բան է ազատությունը, բանտի մեջ ճանաչեցի Քրիստոսին: Բանտում եմ, բայց՝ երջանիկ, որովհետեւ այստեղ գտա ճշմարտությունը»:

Ուրեմն լաց մի՛ եղեք, ձեզ թշվառ մի՛ զգացեք, դուք էլ կարող եք սիրո հակահարված տալ՝ աղոթելով մեզ համար, որ գտնվում ենք բանտից դուրս, բայց հաճախ ձեզնից շատ ավելի բանտարկյալ ենք: Ես, օրինակ, ինձ բանտարկյալ եմ զգում իմ էգոիզմի մեջ, իմ չարության, նենգության, նախանձի, որկրամոլության եւ այլ կրքերի մեջ: Մի՞թե դրանք ավելի լավ են բանտի ճաղերից, մի՞թե դա բանտարկություն չէ: Դուք, որ բանտի ճաղերից ներս եք գտնվում, շատ հնարավոր է, որ ազատ եք այս տեսակ բանտարկությունից: Ուրեմն, խնդրում եմ ձեզ, աղոթե՛ք մեզ համար, ինձ համար, որ գուցե քեզնից ավելի ծանր բանտարկության մեջ եմ:

Եթե չես կարող այս ամենն անել, դժվարանում ես կամ հոգնել ես եւ դադար ես տալիս, վերցրո՛ւ հեռախոսը եւ զանգահարի՛ր որեւէ միայնակ մարդու, որ իր կյանքով կարծես ասելիս լինի. «Տեր, ոչ ոքի չունեմ, ոչ մի մարդ չունեմ այս աշխարհում»: Եվ մենք գնում ենք նրա մոտ ու ասում. «Ոչ մի մարդ չունե՞ս. ես կլինեմ քո մարդը, մի քիչ կընկերակցեմ քեզ, զանգ կտամ քեզ այսօր ու կասեմ՝ բարեւ, կասեմ, որ ես էլ քո վիճակում եմ հիմա, ուրեմն միասին ենք: Կյանքն առաջ է ընթանում, միասին կհաղթահարենք կյանքի բարձունքը, Աստված չի թողնի մեզ»: Թեկուզ եւ լինեք անկողնային հիվանդ, թեկուզ եւ լինեք հաշմանդամ, կարող եք զանգահարել եւ մխիթարել մեկդ մյուսին: Հայր Պորֆիրիոսը, անկողնուն գամված լինելով, շարունակ ընդունում էր մարդկանց, լսում նրանց եւ խոսում նրանց հետ, զանգահարում էր տարբեր մարդկանց ու մխիթարում նրանց, եւ նրա խոսքը ճամփորդում էր ու ջերմություն տալիս լսողների հոգիներին:

Եվ դուք, որ այսօր ունեք հարուստ սիրտ ու հարուստ սեղան, եթե ձեր մեջ ուժ եք գտնում, հրավիրե՛ք ձեր տուն որեւէ միայնակ մարդու: Գիտե՞ք՝ ում տներում եմ հատկապես այդպիսի բան տեսնում. բազմազավակ ընտանիքների: Անհավատալի է, չէ՞. ընտանիքներ, որ ունեն 5, 7, 12, 13 երեխա, տոնական սեղանին ուրիշներին էլ են հրավիրում: Եվ այդ ուրիշների մեջ են նաեւ այնպիսի մարդիկ, որ բարեկամ չեն նրանց, բայց կանչում են՝ իմանալով, որ այդ մարդիկ ոչ ոքի չունեն իրենց կողքին այդպիսի տոնական մի օր:

➥ *էջ 5*

Շահան Շահնուրի մի դասմվածքի գրական-գաղափարական մեկնումը

Ի՞Ր կազմավորման առաջին տասնամյակներում (1920–30-ական թթ.) սփյուռքահայ գրական կյանքի խնդիրներից մեկը գրական ավագ (երեց) եւ երիտասարդ սերունդների փոխհարաբերությունների եւ նրանց գրական հանգանակի հարցն էր: Ո՞րը պետք է լիներ ստեղծվող գրականության առաջադրանքը. հավատարիմ մնալ արեւմտահայ գրականության մշակած ավանդույթներին եւ արծարծել անցյալի՞ կյանքը, թե՞ ցուցաբերել նոր մոտեցումներ եւ արտահայտել օրվա իրողություններից բխող խնդիրներ ու առաջ նայել: Այս կամ այն մոտեցմանը թեր եւ դեմ կարծիքները քիչ չէին, իսկ երբեմն էլ դրանք հասնում էին սուր վեճերի ու բախումների: Շահան Շահնուրն այս առիթով գրեց իր գրական-գաղափարական ուշագրավ հոդվածներից մեկը, որը վերնագրեց «Մենք» *(հոդվածը տպագրվեց Փարիզի «Յառաջ» թերթի 1932 թ. հունվարի 24–26–27 համարներում)*, որտեղ գրական նոր սերնդի «յառաջապահ» դիրքերից մերժեց ավագ սերնդի՝ *«դուքերի»* (որոնց նա անվանում է *«հիներ»*, գրական *«վարիչներ»*, *«տարեցներ»*, *«վարժապետներ»*, *«չքալողներ»*) կեցվածքն ու ըմբռնումները:

«Հների» եւ *«նորերի»* այդ պայքարը պայմանավորված չէր լոկ *«ծննդյան թվականներով»*: Խնդիրը ճշտելն էր այն ուղին, որով պիտի առաջ ընթանար սփյուռքի, այլ խոսքով՝ «Փոքրիկ Հայաստաններու» գրական ողջ կյանքը, որտեղ շատ կարեւոր էր, թե ովքեր պետք է այդ ծանրությունը կրեին եւ ինչ գրական դավանանք, Շահնուրի խոսքով՝ *«պլատֆորմ»* ստեղծեին:

Շահնուրի բնութագրմամբ՝ *«վերջապահներու»* ու *«յառաջապահներու»* տարբերությունը հանգում էր նրան, որ առաջինները գրում էին կորսվածի մասին եւ կատարում *«տժգոյն կրկնութիւններ»*, երկրորդները ջանում էին ընթերցողին առաջնորդել դեպի կյանքի այսօրն ու դրանով իսկ անհատական դիրք ունենալ, ազգային դատին սպասարկել, դիմադրել, դեմ կանգնել «հրեշագլուխ նահանջին», քանի որ *«...մեզի համար այսօր, այս ճգնաժամային պահուն, գոյություն չունի, գոյություն պետք չէ ունենա հայուն փրկութենեն դուրս որեւէ բան» (Շահնուր Շ., Երկեր, Երեւան, 1985, էջ 53)*:

Այլ խոսքով՝ դեպի համազգային սթափում, դեպի մշակութային առաջընթաց եւ դեպի գրական նոր խոսք:

Համահայկական կյանքի նկատմամբ Շահնուրի ցուցաբերած այս մոտեցումը լավագույնս արտահայտվել է նաեւ հետագայում. *«...մուտքը... անցեալին մէջ, զիս առանց այլեւայլի կը բերէ վատթարագոյն ներկային» (Շահնուր Շ., «Թերթիս կիրակնօրեայ թիւը», Պեյրութ, 1958, էջ 40)*, որով եւ պայմանավորվեց շահնուրյան մտածումների եւ ասելիքների ամբողջ բովանդակությունը:

Սա չի նշանակում իհարկե, թե Շահնուրը պաշտպանում էր իր ժամանակակից բոլոր գրողներին: Բավական է մտաբերել վերոհիշյալ հոդվածը գրելու նույն թվականին (1932) շարադրած նրա մի արձագանքը՝ «Նոթեր» վերնագրի ներքո, որը դրսեւորում է Պարսամյան եղբայրների վերաբերյալ ֆրանսիական «Les Nouvells Litteraires» հանդեսի մի ներբողականի հանդեպ ցուցաբերած բացասական վերաբերմունքը, որտեղ գրողը խորհուրդ է տվել հանդեսի խմբագիրներին կարդալ Պարսամյան եղբայրների գրականությունը, որը եւ կարդալուց հետո իրավացիորեն հիասթափությամբ է լցրել խմբագրության աշխատակիցներին, եւ որոնք, ինչպես երգիծում է Շահնուրը. «Այժմ այդ խմբագիրները մեզ կհալածեն փողոցէ փողոց, զէն ի ձեռին» *(նույն տեղում, էջ 47)*:

Ուրեմն, կար այն իրողությունը, որ գրական ասպարեզում քիչ չէին նաեւ ապաշնորհները: Բայց կար հարցի այն կողմը, որ նորերից ոմանք տրվել էին գրական *«նոր»* շարժումներին՝ ոչ միայն խեղելով ասելիքի ոգին ու գաղափարը, այլեւ արտաքին ձայների ազդեցությամբ, Շահնուրի խոսքերով ասած՝ *«աչք շպարելով»* ֆրոյդիզմ, միասեռականություն ու գերապաշտություն մատուցելով ընթերցողներին:

Այս ամենի գեղարվեստական խտացումն ու արտահայտությունը եղավ Շահնուրի «Լյուքսեմբուրգի պահապանը» պատմվածքը, որն իր նախնական տարբերակով եւ «Լիւքսէնպուրկի պահապանները» վերնագրով առաջին անգամ տպագրվեց Փարիզի «Մենք» հանդեսի 1931 թ. Բ համարում *(հանդեսի Գ համարից հետո նրա շուրջ հավաքված խմբակը պառակտվեց. պատճառներից մեկն էլ այդ համարում տպագրված Շ. Շահնուրի «Պույնուզլը»ները» գործն էր)*, որում եւ արծարծված խնդիրը շատ ավելի ընդարձակ եւ այս անգամ որպես ծրագրային դրույթ՝ Շահնուրը շարադրեց իր «Մենք» հոդվածում:

Փարիզի «Յառաջ» թերթի հունվարի 29-ի եւ 30-ի համարներում Շավարշ Միսաքյանը «Շ.» ստորագրությամբ անդրադարձավ Շահնուրի այդ հոդվածին՝ տպագրելով երկու փոքրիկ գրություններ: Մի փոքր ուշ՝ մարտին, Սիմոն Վրացյանը եւս Բոստոնի «Հայրենիք» *(տե՛ս նշված ամսագիրը, 1932, թիվ 5, էջ 146–154)* ամսագրում ծավալուն հոդված տպագրեց Շահնուրի վերոհիշյալ հոդվածի վերաբերյալ:

Շ. Միսաքյանը «Նոր, բայց օր - պակաս» *(տե՛ս «Յառաջ», Փարիզ, 1932, 29 հունվարի)* վերնագիրը կրող գրությունում «ծուռն ու շիտակը» պարզելու համար այն միտքն է հայտնում, որ Շահնուրի գրությունը թեեւ անկեղծ է, սակայն «մեծխոսիկ» է ու «ծեքծեքուն»:

Իր գրությունում Միսաքյանը դրական է համարում Շահնուրի եւ *«այդ տղաքի»*՝ հայ գրականությունը վերագնահատելու *«կամքը»*, բայց նրանց բնութագրում է *«...կտրուած հողէն ու ջուրէն»*, ինչպես եւ անծանոթ... «երէկուան պատմութեան», եւ որ նրանք ապրում են խմորման շրջան եւ պիտի հետագայում գտնեն իրենց դիմագիծը:

Եզրափակելով իր խոսքը՝ «Շ.»-ն գրում է, որ *«...գործ ունինք նոր, բայց օր - պակաս խմբակի մը հետ» (նույն տեղում)*, որը թերթի հաջորդ համարում «Միամտութիւններ» վերնագրի տակ տպված գրությունում որակում է որպես *«ժամանակէն առաջ ծնած»*, նաեւ *«երերուն»*, *«թերակատար՝ նորութեամբ եւ յաւակնութիւններով» (տե՛ս «Յառաջ», Փարիզ, 1932, 30 հունվարի)*:

Չբավարարվելով այսքանով՝ «Շ.»-ն իր երկրորդ գրության մեջ մեջբերում է կատարում Շահնուրի հոդվածից եւ ավելացնում, թե *«...նահատակներ երեւալու հիւանդութիւն մը կը տիրէ այս տղոց մէջ»*: Ըստ հոդվածագրի՝ նորերի բացասական գծերից մեկն էլ այն է, որ, շարունակելով պահպանել կրակը, նրանք կարծում են, թե *«շնորհ է որ կ'ընեն Հայոց ազգին»*: Մի թերություն էլ «Շ.»-ն տեսնում է այն բանում, որ այդ սերունդը ջանում է իրեն *«աւելի բարձր գնահատել» բոլորից*:

Շարունակությունը՝ էջ 6

ՄԻԱՅՆԱԿ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻՆ

էջ 4

Մի անգամ մի ընտանիք հրավիրել էր բացարձակապես անծանոթ մարդկանց: Ես զարմացած ասացի. «Կներե՛ք, ինչպե՞ս եք այս մարդկանց հրավիրում, չե՞ք խղճում ինքներդ ձեզ (մեր մեջ ենք խոսում հիմա), ի՞նչ եք մտածում: Այդքան չարչարանք, հոգնություն, այդքան մեծ սեղան, այդքան ուտելիքներ... եւ դեռ ուրիշներին է՞լ եք կանչում: Ինչպե՞ս եք դիմանում»: «Հայր,– ասացին,– բայց այսօր Սուրբ Ծնունդ է, ուրախ ենք, որ նրանք էլ են մեր սեղանի շուրջը նստած այսպիսի մի օր»: Քրիստոսն ասում է. «Երբ սեղան ես պատրաստում, մի՛ հրավիրիր մեծապատիվ մարդկանց եւ նրանց, ովքեր կփոխհատուցեն քեզ, որովհետեւ, ասում է, եթե փոխհատուցեն, վարձդ մարդկանցից արդեն ստացած կլինես: Այլ հրավիրի՛ր այնպիսի մարդկանց, որ ոչինչ չունեն քեզ տալու՝ բացի շնորհակալությունից, երախտագիտության արցունքներից ու իրենց անսահման սիրուց» *(հմմտ.՝ Ղուկ. ԺԴ. 12–14)*: Դժվար է, չէ՞, հրավիրել այսօր օտար մարդկանց, երբ դուք ընտանիքով հազիվ եք տեղավորվում սեղանի շուրջը: Բայց հետաքրքիրն այն է, որ տեղավորվելու խնդիր երբեք չի լինում, մտածում ես՝ ինչպես տեղավորվեց այդքան մարդ այդ մեկ սեղանի շուրջը: Հրաշալի կլինի, եթե կարողանաս այդպիսի բան անել:

Այսօր Սուրբ Ծնունդ է՝ տոնական, ուրախ ու բարի մի օր: Ի վերջո, դուք էլ՝ մենակ մարդիկ, շատ բան արեցիք այսօր: Բազմաթիվ այցելություններ արեցինք միասին, եւ մինչեւ երեկո դեռ ժամանակ ունեք այլ այցելություններ էլ անելու, աղոթելու, զանգահարելու մարդկանց եւ զրուցելու նրանց հետ: Ցանկանում եմ, որ մենակ մարդիկ այսօր ունենան ուժ, համբերություն ու հավատ, հավատ ու սեր Քրիստոսի նկատմամբ: Դու, որ մենակ մարդ ես, ուժե՛ղ եղիր, լաց մի՛ եղիր, մի՛ տխրիր, որովհետեւ դա էլ թաքնված էգոիզմ է, եւ մի՛ ասա. «Ինչո՞ւ ես այս վիճակում լինեմ, ինչո՞ւ է կյանքն ինձ հետ այսպես վարվում», այլ ուժե՛ղ եղիր եւ խոնարհաբար ընդունի՛ր քո վիճակը, ուղի՛ղ կանգնի՛ր, մի՛ կռացիր, մտածի՛ր, որ Աստված է կամեցել, որ այդպես լինի:

Եվ բոլորս, եղբայրնե՛ր եւ քույրե՛ր, այս տոնի անսահման ուրախության մեջ մի քիչ էլ տխրենք ու հիշենք, որ այս սուրբ օրը դեռ լաց լինող աչքեր կան աշխարհում՝ մեր շենքում, հարեւան տանը: Գուցե քո դիմաց ապրում է մեկը, որը մեծ ցավ ունի, մեկը, որը ծանր ու դժվար բնավորությամբ կին կամ երեխա ունի, մեկը, որն աշխատանք է փնտրում:

Այս օրն էլ կավարտվի, կգա գիշերը, կգա մի պահ, երբ մենակ կմնաս. ի վերջո, բոլորս էլ մենակ ենք աշխարհում՝ եւ ամուսնացածները, եւ չամուսնացածները, եւ բազմազավակները... Երբ պառկես քնելու՝ այդպես մենակ լինելով քո անձի հետ, Աստծու հետ, թող զղջման, սիրո, բարության, ջերմության մի արցունք կաթի աչքիցդ, որ կթեթեւացնի ուրիշների ցավը: Եվ հավատացած եմ, որ Քրիստոսը կվերցնի այդ արցունքը եւ այն աստղ կդարձնի ու կդնի երկնքում՝ ջերմացնելու մեր սառը երկիրը: Եվ արցունքդ կփայլի երկնքում, որովհետեւ սիրո արցունք կլինի: Եվ Քրիստոս մեր արցունքը կխառնի Իր մանկական արցունքների հետ:

Վստահ չեմ՝ արդյոք հիմա էլ չեն կաթում արցունքներ Քրիստոսի աչքերից, որովհետեւ դեռ իրականություն չի դարձել Ավետարանի խոսքը. «Փա՛ռք Աստծուն՝ բարձունքներում, եւ երկրի վրա խաղաղություն եւ հաշտություն մարդկանց մեջ» *(Ղուկ. Բ 14)*: Աղոթենք այս գիշեր մեծ ուրախությամբ, որովհետեւ ծնվել է Քրիստոս, եւ մեծ տխրությամբ, որովհետեւ դեռ չենք կարողանում տեղավորել մեր սրտերում Քրիստոսի Ծնունդը: Ծնվել է Քրիստոսը, սակայն մեր երկրի վրա դեռ խաղաղություն չի հաստատվել: Մեր Տերը խաղաղություն է տալիս նրանց, ովքեր ցանկանում են, ովքեր մեկնում են իրենց ձեռքերը, դիպչում Տիրոջը եւ ընդունում Նրան իրենց մեջ, ովքեր հաղորդվում են Նրա Սուրբ մարմնին ու արյանը: Մեր մեջ է Տիրոջ խաղաղությունը, բայց, ցավոք, ամենուր չի տարածվել: Դեռ շատ հոգիներ կան, որ չեն ընդունել Քրիստոսին, որ վիշտ են զգում, մենակություն, դատարկություն, տխրություն: Թող այդ հոգիների համար մի փոքր արցունք կաթի մեր աչքերից այսօր:

Ուրեմն հիշի՛ր, սիրելի՛ մենակ եղբայր ու մենակ քույր, որ *մենակ չես*: Քո մահճակալի մոտ, քո սենյակում, տանը, խցում է նաեւ Քրիստոսը: Նրա՛ համար ես ապրում, Նա՛ է քեզ աշխարհ բերել եւ քե՛զ համար է աշխարհ եկել, որպեսզի մխիթարի քեզ:

Շնորհավորում եմ բոլորիդ: Եթե դեռ սեղան չեք նստել, բարի ախորժակ եմ մաղթում ձեզ: Մաղթում եմ, որ սուրբծննդյան ուրախությունն զգաք ձեր սրտերում, հոգիներում, թող երեւա ձեր դեմքերի վրա, եւ թող ձեր տունը լցվի երջանկությամբ ու աստվածային սիրով: Հիշենք, որ Աստված փոքրիկ երեխա դարձավ, որպեսզի կարողանանք մոտենալ Նրան, պատմել Նրան մեր ցավը, վիշտը եւ մխիթարություն ու օրհնություն ստանանք Նրա փափուկ ու քնքուշ ձեռքերից այսօր եւ ողջ կյանքում:

Հունարենից թարգմանությունը՝
Տաթեւիկ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ

Վահան Տերյանի «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԽՈՐՀՈՒՐԴԸ

(բանաստեղծի ծննդյան 134-ամյակի առթիվ)



ՎԱՅ մեծանուն գրողը՝ Վահան Տերյանը, հայրենասիրական երգեր գրել է ստեղծագործության բոլոր շրջաններում: Հայրենիքի անցյալի, ներկայի, ապագայի հարցերը բանաստեղծին մշտապես հուզել ու մտահոգել են: Հայրենասիրությունը նրա համար ոչ թե «ստեղծագործության թեմա» է եղել, այլ կազմել է իր աշխարհընկալումների հիմքը: Հայրենիքը Տերյանի համար եղել է երազանք, միաժամանակ՝ ցանկություն, մխիթարություն եւ սփոփանք: Դեռեւս գործունեության վաղ շրջանում, երբ ցարական մռայլ իրականության պայմաններում փշրված էին բանաստեղծի լուսե երազները, նա դարձյալ դառնացած ապավինում էր հայրենի երկրին:

Տերյանի «Երկիր Նաիրի» շարքն ստեղծվել է պատերազմի հետ կապված հիասթափություններից հետո, երբ «Մշակ» թերթի 1915 թվականի նոր տարվա համարում բանաստեղծը տպագրում է երեք բանաստեղծություն՝ «Այնպես անխինդ են եւ նման լացին», «Միթե վերջին պոետն եմ ես», «Ինչպե՞ս չսիրեմ, երկիր իմ կիզված» *(«Մշակ» թերթ, Թիֆլիս, 1915, № 1, 1 հունվարի, էջ 2–3)*: Նշված ստեղծագործություններում իր օրերի Հայաստանի փոխարեն բանաստեղծը երգում է «անցյալի մշուշով ծածկված Նաիրի երկիրը», իր երեւակայությամբ ստեղծված նոր հայրենիքը՝ «ցնորք Նաիրին», ոչ թե նրա անցյալի փառքի, այլ հեզության, մեղմության ու տրտմության համար:

Տերյանի հայրենասիրությունն իր դրսեւորումն է գտել նաեւ «Հոգեւոր Հայաստան» հոդվածում: Ինչպես այստեղ, այնպես էլ «Երկիր Նաիրի» բանաստեղծական շարքում Տերյանին մտահոգում էին ժողովրդի «կուլտուրական ապագայի խնդիրը», հոգեւոր արժեքների ստեղծումն ու պահպանումը: Տերյանը հակադրություն չէր տեսնում հայության «կուլտուրական ապագայի» եւ նրա ֆիզիկական գոյության մասին մտահոգվողների տեսակետների միջեւ, քանի որ ֆիզիկականի մասին մտահոգվողներն զբաղված էին նաեւ հայության ապագայի խնդրով: Ուրեմն էական խնդիրը մեկն էր՝ հայության «կուլտուրական» ապագայի ապահովումը, հոգեւոր արժեքների ստեղծումն ու պահպանումը: Հայ ժողովուրդը պետք է պահպաներ իր ստեղծած արժեքները՝ դրանք փոխանցելով գալիք սերունդներին:

Ազգի գոյության առհավատչյան իր կենսունակությունն է արժեքներ ստեղծելու հարցում: Մշակույթն այս դեպքում կապող օղակ է դառնում տարբեր սերունդների միջեւ: Չէ՞ որ առանց հոգեւոր, մշակութային արժեքների՝ հայոց լեզվի, մշակույթի, հայրենիքի, խոսքն անգամ կդառնա ավելորդ: Մշակույթն ու արվեստն են ազգին ուժ տալիս:

Բանաստեղծը «նոր հայրենիքի» կերտման գործում տեսնում է ոչ թե բուրժուազիային, այլ հասարակ ժողովրդին: Ժողովրդի ստեղծագործ ուժերի լարումով էլ ստեղծվում է մշակույթը, ստեղծվում են հոգեւոր արժեքները, ի վերջո՝ հոգեւոր հայրենիքը: Ժողովուրդն է հայրենիքը շենացնողն ու պաշտպանողը, հոգեւոր արժեքներ ստեղծողը, մինչդեռ բուրժուազիայի համար հայոց լեզուն, հոգեւոր հայրենիքը կամ հայկական մշակույթ ասվածը գոյություն չունեն. *«Նա միանգամայն անտեղյակ է այդ կուլտուրայի գլխավոր գործոններին – լեզվին, գրականությանը, արվեստին – այն ամենին, ինչ մի ազգի կուլտուրան բնորոշող հատկանիշներն են կազմում: Նա ոչ միայն անտեղյակ է, այլ կամք չունի տեղյակ լինելու. արհամարհում է այդ ամենը» (Վահան Տերյան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Եր., 1975, էջ 108)*:

Բուրժուական մտավորականը, եթե արհամարհում է հայոց լեզուն ու մշակույթը, չի կարող ստեղծել հոգեւոր հայրենիք կամ զորավիգ լինել նրա պաշտպանությանը: Տերյանը քննադատում է նաեւ հայության փրկությունը մեկուսացման մեջ որոնող մտավորականությանը: Մենք պետք է մաքառենք հոգեւոր արժեքների պահպանմանն ու զարգացմանը խոչընդոտող բոլոր արգելքների դեմ: Ոչ մի արժեք չունի այն ազգությունը, որը միայն արտաքին սահմաններով է պահպանում իր գոյությունը, մի ինքնություն, որն անգամ կարիք չկա պաշտպանելու: *«Մինչեւ անգամ այսօրվա Ձեր արածների համար դուք պատասխանատվությունը կնետեք նույն ձեր այսօր այդքան սիրեցյալ հայրենիքի չարքաշ ու դժբախտ, քաղցած ու հուսախաբ զավակների վրա... Եվ դարձյալ հայրենիքի, հոգեւոր Հայաստանի կառուցման ծանր ու վշտալի, բայց ազնիվ աշխատանքը կվերցնեն իրենց վրա նրանք, ում դուք չեք ճանաչել երբեք, չեք ուզում ճանաչել այսօր, չեք կամենա ճանաչել առավել եւս վաղը: Անուններ տալու կարիք չկա, ձեր սրտին ոչինչ չեն ասի այդ անունները»*,– գրում է Տերյանը *(նույն տեղում, էջ 112)*:

Հայրենիքի մասին իր հայեցակարգի հրապարակումը Տերյանն սկսում է այդ օրերի օրհասական խնդիրների վերլուծությամբ: Խոսքն առաջին հերթին վերաբերում էր Հայկական հարցին: Հայության ապագան չի կարելի դիտարկել ժողովրդի միայն մի մասի վերաբերությամբ: Հայաստանը կա, գոյություն ունի իր ամբողջականությամբ ու միասնականությամբ: Հայրենիքն անտրոհելի ամբողջականություն է՝ անթիվ կապերով փոխպայմանավորված:

Միայն ֆիզիկական ներկայությամբ ազգ չեն կերտում: Հոգեւորն ու ֆիզիկականը կամ նյութականը համեմատության մեջ դնելիս նախապատվությունը տալիս ենք արժեքայինին՝ հոգեւորին, բայց առանց ֆիզիկականի, նյութականի գոյության մենք չենք տեսնի ու գնահատի հոգեւորը: Առանց հոգեւորի անբովանդակ է ֆիզիկականը, իսկ առանց ֆիզիկականի՝ անմարմին հոգեւորը... Ուրեմն հոգեւորի ու ֆիզիկականի միասնությամբ է մարմին առնում բովանդակությունը... Բայց միեւնույն ժամանակ, նկատենք, եթե նյութական արժեքը մարդու կյանքի գոյության հիմնական նպատակն է, դրա կորստով կանհետանա նրա կյանքը, մինչդեռ հոգեւոր արժեքներով մարդը կարող է կանգուն մնալ՝ չհաշտվելով այդ կորուստների հետ:

Շարունակությունը՝ էջ 7

Շահան Շահնուրի մի պատմվածքի գրական-գաղափարական մեկնումը

Սկիզբը՝ էջ 5

Շահնուրի հոդվածը շատ ավելի խորքային վերլուծության է ենթարկում Սիմոն Վրացյանը՝ իր «Մենք» եւ «Դուք» վերնագիրն ունեցող հոդվածում: Չմանրամասնելով միայն ասենք, որ Ս. Վրացյանը, վեճի առարկան համարելով մշակույթի, գրականության եւ ազգային քաղաքականության մեջ *«հների ու նորերի»* դերի հարցը, նկատել է տալիս, որ խնդիրը, ավելի լայն առումով, սերունդների *«էութեան, յաջորդականութեան, փոխհարաբերութեանն եւ առաքելութեանն»* է վերաբերում:

Նշելով հանդերձ, որ Շահնուրն իր հոդվածում *«պաղարիւնութիւն»* ու *«անկողմնակալութիւն»* չի ցուցաբերում, հոդվածագիրը չի ուրանում այնտեղ առկա *«անկեղծութիւնը»* եւ *«ի խորոց սրտի»* ասված խոսքը: Այս առումով քննելով Շահնուրի հոդվածը եւ հասկանալի համարելով նոր սերնդի դժգոհությունը ներկայից եւ ընդվզումը անցյալի դեմ՝ Ս. Վրացյանը այն ճիշտ միտքն է հայտնում, որ թե՛ հին եւ թե՛ նոր սերնդի դիրքորոշումը մեկը պետք է լինի՝ *«Աչքերը դէպի հայը»*, եւ որ սփյուռքի պայմաններում *«բոլոր «սերունդները» դատապարտուած են անելու միեւնոյն գործը – պահել ու պահպանել ինչ որ մնացել է մեծ փոթորիկից» (նույն տեղում, էջ 148)*: Այսինքն՝ անել այն, ինչ արել են հայ սերունդներն անցյալում, ասել է՝ «դիրք պահել», այսինքն՝ գրականության մեջ եւ արվեստում անվթար պահել հայկականը, մարդկայինը, գեղեցիկը, որը շատ ավելի դժվար գործ է, քան *«յառաջապահութիւնը»*: Ս. Վրացյանը, անդրադառնալով Շահնուրի հոդվածում արտահայտված մի մտքին, որը եւ Շահնուրի «Լյուքսեմբուրգի պահապանը» գործի հիմնական ասելիքն է, իրավացիորեն գրում է, որ նորերը («մենք»-երը) ավելի քիչ գիտեն հայ իրականությունն ու անցյալը, որ նրանք *«...ֆրանսիական մտքի աւազանից դուրս չեն գալիս ու շարունակում են մտաւոր ու հոգեկան հիւթ ստանալ օտար արմատներից: Ֆրանսիական մտքից էլ առնում են միայն այն՝ ինչ որ մակերեսի վրայ է երեւում, փրփուրը. խորը թափանցելու հնարաւորութիւնից, իսկ շատերը նաեւ կարողութիւնից զուրկ են» (նույն տեղում, էջ 151)*: Այսինքն՝ հենց այն, ինչ ասում էր Շահնուրը: Տարբերությունն այն էր, որ Շահնուրն այդ ամենը վերագրում էր ինչպես հին, այնպես էլ նոր սերնդի այն բոլոր մարդկանց, որոնք ունկն էին դնում արտաքին ձայներին եւ օտարամոլությամբ էին տառապում, իսկ Ս. Վրացյանը՝ միայն նոր սերնդին:

Եվ ուրեմն, ամբողջ հարցը մշակութային ու գրական արժեքները պահելու ազգային ձեւին եւ բովանդակությանն էր վերաբերում: *«Հայերէն լեզուի, գրականութեան, գեղարուեստի՝ բովանդակ մշակոյթի գոյութեան եւ զարգացման ապահովութիւնը» (նույն տեղում, էջ 152)*,– ինչպես գրում էր Ս. Վրացյանը, սփյուռքի տարածքներում այլ բան չէ, քան ազգային ու քաղաքական գործ:

Շահնուրյան վերոհիշյալ երկու գրություններում շոշափված հարցերը եւ արձանագրված մոտեցումները ժամանակավոր չէին եւ անցողիկ չեղան սփյուռքահայ գրականության համար: Օրեցօր դրանց ավելանում էին նորերը, որոնք այդպես էլ անպատասխան եւ կամ անլուծելի էին մնում:

Այդ խնդիրների մի մասին գրողն այս կամ այն կերպ անդրադարձավ նաեւ իր հետագա գեղարվեստական գործերում ու գրականագիտական հոդվածներում՝ «Յարալէզներուն դաւաճանութիւնը», «Առաւօտեան շեփոր» պատմվածքներում, «Ջոյգ մը կարմիր տետրակներ»-ում, ուր գրում էր, որ ինքնատիպության ձգտումը նոր սերնդին մղել է հակամարտության մի կողմից այն ամենի դեմ, ինչը կրկնություն է հնի, մյուս կողմից այն ամենի, ինչը մակերեսային նմանակում է օտար ազդեցությունների: Վերջին միտքն արծարծվել է Շահնուրի նաեւ «Վաւերաթուղթը», «Դրախտ կորուսեալ», «Գրականութենէն անդին եւ այլուր» եւ մի շարք այլ հոդվածներում:

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՇՎԱՆ ՖՈՒԳԱ



Սկիզբը՝ էջ 4

Եվ ահա գեներալի հերթական արարքը. «Հրամայել էր կարմիր ներկել արեւի շողերն ու աստղերի ցոլքերը...» (էջ 111): Հենց այդպես, որովհետեւ առանց իր հրամանի՝ բնությունը կխամրեր. ամեն ինչ ենթակա է իրեն, բնությունն ինչու պիտի բացառություն լինի:

Գ. Իշխանության սեւ արկղերը

Կործանված ինքնաթիռների սեւ արկղերը, աշխարհի ուշադրությունը սեւեռելով որոնման դժվարություններին, իրենց բովանդակությամբ մնում են անհայտ, որովհետեւ չեն հանրայնացվում: Մարկեսը գեղարվեստի լեզվով հանրայնացնում է իշխանությունների սեւ արկղերի գաղտնիքը. ո՞վ է պալատական ապահովության մեջ շրջագայող երկրի ղեկավարը, իր ժամանակին հայտնի գեներալը, իշխանության նահապետը: Ի՞նչ է փոխվում, երբ համազգեստը փոխվում է քաթանե հագուստի, եւ ի՞նչ է կատարվում, երբ կուրծքը զարդարող անանցանելի մեդալների փոխարեն մարդկային մի սիրտ է:

Մարկեսն իր թափանցումների աքցանով միանգամից բռնում է հերոսին. հետո նրա տեղը ո՛չ խոշորացույցի եւ ո՛չ էլ մանրադիտակի տակ է, այլ իրական հայացքի՝ գիշատիչը ներկայանում է մարդկային հատկանիշերով՝ համազգեստի տակ թաքնվածը կենդանի արարած է:

Նահապետի դաժանության մի առանձին դրվագ է վիճակախաղի գնդիկներ հանող 2000 երեխաների սպանությունը: Իսկը՝ կոտորածն մանկանց:

Որպեսզի գեներալը հաղթի, երեխաներին սավորեցրել էին պարկի միջից հանել նախապես սառույցով սառեցված համարակիր գունդը: Հետո գլխի էին ընկել, իսկ եթե երեխաները գաղտնիքը բացահայտե՞ն: Այդ իսկ պատճառով նրանց մեկուսացրել էին, հետո երգելով լցրել ցեմենտով բեռնված նավը եւ երկրի հեռավոր մի սահմանագոտում երգելով էլ պայթեցրել: Երբ հրամանը կատարած երեք սպաները ձիգ պատվի կանգնած զեկուցել էին, նախ հավատարմության մեդալ շնորհեց, իսկ հետո գնդակահարեց՝ որպես հանցագործների, որովհետեւ խորքում խղճի ձայնն ասում էր՝ այո՛, «հրամաններ կան, որոնք կարող են տրվել, սակայն չի կարելի դրանք կատարել, ես ձեր մերը, խեղճ երեխաներ» (էջ 113):

Գեներալի գործունեության բոլոր կողմերը իշխանական բարիկադներով պաշտպանված են, բայց Մարկեսը նրան բացում է մարդկային նկարագրով, որի շրջանակները սահմանափակ են:

Մարդկայինը նրա սեռական կյանքն է, որտեղ երրորդ մարդու ներկայությունը բացառվում է, կավատներն ընդամենը մատակարարներ են: Այստեղ նախահարձակ է եւ ըստ ամենայնի փնթի որձից այն կողմ չի անցնում: Մարդկայինը նրա վերաբերմունքն է մոր հանդեպ: Մարդկայինը նաեւ առանձին դրսեւորումների մեջ է: Բայց գլխավորը իշխանությունն է, եւ այն պահելու պարտադրված մոլուցքը:

Այստեղ ընդդիմադիրների ապստամբության մի դրվագ է իշխանության դեմ: Երկու կողմերն ուզում են ժողովրդին իրենց կողմը քաշել: Հակառակ իրողության՝ գեներալը կարգադրում է. «Ժողովուրդն ի՛մ կողմից է», եւ սա գործունեության հրաման է, որ ավարտվում է ապստամբների ղեկավարներին աննախադեպ խորամանկությամբ անակնկալ պայթեցնելով կաթի վեց տակառների մեջ դրված ուժանակով:

Նա գիտեր՝ որտեղ ինչ է կատարվում, եւ կանխատեսում էր, որ ամենավստահելի թվացող իր պաշտոնյան է իրեն դավաճանելու: Դրա համար չնչին կասկածի դեպքում նրանց ոչնչացնում էր աջուձախ եւ հպարտորեն անցնում միջանցքներով՝ «խուճապահար պաշտոնյաների եւ իրեն անմահ հռչակող անվրդով քծնողների միջով»՝ արձակելով «հրացայտ փնչոցների քարահոսք»: Արագ կողմնորոշվում է՝ իրեն լավ ճանաչող մեկն էր ժողովրդին իր դեմ հանել եւ հիմա ներկայանում է միջնորդ խաղաղարարի առաքելությամբ: Պարզվում է «հավատարիմ համախոհն» է՝ Ռոդրիգո դե Ագիլարը՝ որին հետո մատուցում են հսկայական սկուտեղի վրա՝ համեմված, փռում կարմրացրած, բերանի մեջ կանաչու փնջիկ, ինչպես խոճկոր, ավելացրած նրա տոնական արդուզարդը՝ 14 ֆունտ կշռող մեդալներ, արիության տրեզներ: Ահա պաշտպանության նախարարն իր հակահիշխանական արարքի համար այսպես շուքով հայտնվում է ընթրիքի սեղանին եւ պատառ-պատառ հրամցվում հյուրերին:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Վահան Տերյանի «ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԽՈՐՀՈՒՐԴԸ

Սկիզբը՝ էջ 6

Եթե սերունդներն իրենց գոյության նպատակը չհամարեն այդ կորուստների վերականգնումն ու հոգեւոր արժեքների ստեղծումը, ապա կհայտնվեն կյանքի հատակում: Նյութական կորուստները միշտ էլ կարելի է վերադարձնել՝ ի տարբերություն հոգեւոր կորուստների, որոնք անդառնալի են: Ասել է թե՝ անհրաժեշտ է հոգեւոր արժեքներով հայրենիք ստեղծել: Հոգեւորը պիտի լինի հայրենիքի խորհրդանիշը, ոչ թե հայկական համազգեստով հայ ոստիկանը: Այսպես է առաջ գալիս Տերյանի պատկերացրած հայրենիքի պատկեր-առասպելը:

Ֆրանսիացիների նման հզոր ու քաղաքականապես ապահով մի ժողովուրդ ամենուրեք հիմնում է իր լեզուն պահպանող ալիանսներ, իսկ մենք, որ բազմահազար հայեր ունենք Մոսկվայում, չունենք մի այնպիսի ընկերություն, որը կզբաղվեր հայոց լեզվի կամ մշակութային այլ հարցերով: Չպետք է բավարարվել միայն հայրենիքի սիրո ու ազգային հպարտության մասին խոսելով, անհրաժեշտ է միացնել այդ հայրենիքի ցրված ուժերը՝ ամրացնելով նրանց հոգեւոր կապերը. չէ՞ որ այդ կապն է ի վերջո հայրենիք ստեղծողն ու պահողը:

Չպետք է ծույլերի հոգեբանությամբ հույսներս դնենք միայն արտաքին հրաշքների վրա, չպետք է մեզ կերակրենք այն հավատով, որ «մի դյուքական ձեռք» մեզ կարող է փրկել կամ ազգ դարձնել: Մեր հույսն ու ապագան ոչ թե նյութական Հայաստանի ստեղծմանը պիտի հիմք դարձնենք, այլ ծառայեցնենք հոգեւոր արժեքների ստեղծմանը՝ աշխատելով հոգեւոր Հայաստանի համար: Հակառակ դեպքում կնմանվենք այն տգետ բուրժուազիային, որն առատորեն շռայլում է իր գումարները՝ դպրոցական շենքեր կառուցելու համար՝ առանց մտածելու, թե ինչպիսի դպրոց է լինելու այդ շենքի մեջ: Մեր հայրենիքում ունենք դպրոցական շքեղ շենքեր, որոնց ճակատին ոսկետառ դրոշմված է *բարերարի անունը*, բայց դրանց շարքում չենք գտնի մի դպրոց, որն օրինակելի կլիներ եւ կանգնած իր բարձրության վրա: Հայրենիքը նյութական արժեքներով չի գոյատեւում, քանի որ նրան շունչ ու հոգի տալիս են ոչ թե տարածքը, այլ դարերով ստեղծված հոգեւոր արժեքները: Միայն շենքեր կառուցելով չպետք է ավարտված համարել հայրենասիրությունը: Դա հավասարազոր կլինի ինքնաոչնչացման: *«Նյութականը չի կարող Հայաստան դառնալ առանց կայացած կամ գոնե այդ ձգտումը դավանող ազգի... Դրանք կարող են արագացնել, դյուրացնել գործընթացը, նպաստավոր պայմաններ ստեղծել, բայց կա եւ ներքին կամքի խնդիր... Ազգը միայն արտաքին ուժերի զորությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլեւ իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կապով: Պետք է, բացի արտաքին հնարավորությունից, լինի եւ ներքին մի զորություն, մի հոգեւոր մղում, որ մարդկանց համախմբումը ազգ է դարձնում: Որքան ուզում է թող ազատ ու անկախ լինի մի Ալբանիա, դա երբեք չի ստեղծի ազգ, եթե ալբանական ժողովուրդը մի ներքին մղում չունենա դեպի այդ եւ տեւական ու ծանր աշխատության գնով ձեռք չբերե այդ արտոնությունը»*,– գրում է Տերյանը *(նույն տեղում, էջ 113)*:

Շարունակելի

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Ի սկզբանէ էր Բանն...

ԸՍՏ Աստվածաշնչի՝ Աստված համատարած խավար անհունից ստեղծեց երկինքն ու երկիրը, լույսը զատեց խավարից, ստեղծեց երկնքի լուսատուները, որ լուսավորեն երկիրը զօր ու գիշեր, ստեղծեց երկիրը՝ հող ու ջրով, ստեղծեց բուսական ու կենդանական աշխարհը, ստեղծեց ամեն ինչ: Եվ այդ ամենն արարեց խոսքով: «Եղիցի լոյս»,– ասաց, եւ եղավ լույս: «Թող երեւա ցամաքը», եւ եղավ: Եվ ինչ որ ասաց, եղավ: Եվ Իր ստեղծած աշխարհին տիրակալ կարգեց Իր արարած առավել կատարյալին՝ մարդուն, Իր կերպարանքով ու նմանությամբ: Եվ նրան տվեց այն, ինչ չտվեց ոչ մեկին՝ խոսքը:

«Ի սկզբանե էր Բանն,– հաստատում է Հովհաննես ավետարանիչը,– Եվ Բանն Աստված էր»: Բանը խոսքն է, միտքն ու մտածումը: Բանն Աստված է, եւ այստեղ նրանք կարծես նույնանում են, քանի որ Աստված խոսքով արարեց աշխարհը:

Աստվածային ամենակատարյալ շնորհը՝ խոսքը, Աստված տվեց մարդուն, որ նա՝ միակը, հավիտյանս հավիտենից փոխանցի այն իր նմանին, թափանցի բնության գաղտնիքների եւ իր իսկ հոգու խորքերը: Երբ ստեղծեց Ադամին ու Եվային, Աստված, անշուշտ, նրանց պատգամներ տվեց, ինչ-որ բաներ ասաց: Թե ինչ լեզվով, կարեւոր չէ: Այդ լեզուն շարունակվեց, ըստ Աստվածաշնչի, մինչեւ Բաբելոնի աշտարակաշինությունը, երբ Աստված հետ առավ մարդկանց միակ լեզուն, տվեց տարբեր լեզուներ, որ խումբ-խումբ զբաղվեն իրենց երկրային գործերով եւ չխառնվեն աստվածային խնդիրներին: Իր խորհուրդ-պատգամներն Աստված տվեց Ադամին ու Եվային, տվեց նաեւ խոսելու շնորհը, որպեսզի այդ պատգամները նրանք սերնդեսերունդ փոխանցեն իրենց ժառանգներին:

Հետագայում կարիք է զգացվել հեռակա խոսքի: Մարդիկ սկսել են նշաններ փորագրել քարերի, ժայռերի, ծառերի վրա, որ իրենց հետեւից եկողները չկորցնեն ճանապարհը: Կամ պայմանական մի նշան են դրել, որպեսզի մյուսները հասկանան, թե այդ վայրն ինչ կենդանու որսատեղի է: Այսպես, հեռակա հաղորդակցությունն առաջադրել է գրի անհրաժեշտությունը, եւ սկսվել է մարդկային զարգացման գրային շրջանը: Այսօրվա նշանակությամբ գրերին նախորդել են պատկերագրությունը, նշանագրությունը, ապա՝ իմաստավորված գրությունը, հիերոգլիֆները, սեպագրերը եւ այլ տեսակներ:

Հայկական բարձրավանդակում, ուր հաստատվել է Հայկ նահապետը, եւ որտեղ կազմավորվել է հայ ժողովուրդը, հայտնաբերված ամենահին նշանագրերը կամ պատկերագրերը գծապատկերներ են այծի պատկերով՝ գծագրված-փորագրված ժայռերի ու քարանձավների պատերին: Հայտնաբերվել են հնագույն նշանագրեր, որոնք պայմանականորեն անանվել են «մեհենական» (մեհյաններում օգտագործվող), Ուրարտական թագավորության շրջանին նախորդող հեթանոսական պետության (մ. թ. ա. մոտ 20–8-րդ դարեր) շրջանի արձանագրություններ, որոնց հիերոգլիֆներն արտահայտում են բառի, վանկի եւ տառի իմաստներ:

Շարունակությունը՝ էջ 8

Ի սկզբանէ էր Բանն...

Սկիզբը՝ էջ 7

Գտնվել են ուրարտական շրջանի սեպագիր արձանագրություններ, որոնց սեպագրերը նույնպես առանձին բառերի, վանկերի իմաստներ են արտահայտում եւ ունեն զարգացման ավելի բարձր աստիճան: Հայաստանի տարածքում հայտնաբերվել են նաեւ հետագա շրջանների արձանագրություններ՝ փորագրված արամեական, ասորական, հունական գրերով:

Չքննարկենք տարակարծությունները՝ Մեսրոպ Մաշտոցի մեծագործությունից առաջ մենք ունեցե՞լ ենք հայերեն գիր ու գրականություն, թե՞ ոչ: Պարզապես մտածենք, որ գրերի գյուտից անմիջապես հետո՝ 5-րդ դարում, միանգամից ստեղծված մեր թարգմանական ու ինքնուրույն գրականությունը չէր կարող գրավոր խոսքի այդքան բարձր մշակույթ՝ հարուստ բառապաշար, լեզվաոճական այդպիսի բազմազանություն ու ճկունություն ունենալ, այդչափ գեղեցիկ ու շքեղ լինել, եթե դարավոր ավանդույթները չլինեին: Ինչեւէ... Հարցի վերաբերյալ առավել ճշգրիտ եւ փաստացի մեկնաբանությունները թողնում ենք պատմաբաններին ու լեզվաբաններին:

Գրերի ստեղծմամբ, ինչպես նշեցինք, մեծ թափ ու զարգացում ստացավ գրավոր խոսքը՝ նպաստելով գրականության, պատմագրության զարգացմանը: Դարերի ընթացքում ստեղծվեցին բազմաթիվ գրական ու պատմական աշխատություններ: Սակայն այդ ամենն արվում էր ձեռագիր եւ շատ երկար ժամանակ էր պահանջում: Այսպես շարունակվեց մինչեւ 1445 թվականը, երբ Գերմանիայի Մայնց քաղաքում Յոհան Գուտենբերգը ցուցադրեց մի գյուտ, որն աննախադեպ խթան հանդիսացավ ոչ միայն լեզվի, այլ նաեւ տնտեսության զարգացման ասպարեզում: Եվ թեեւ դեռեւս չորրորդ դարում Չինաստանից Իտալիա էր հասել տպագրության գաղտնիքը, եւ այն բերող ծովագնացների մեջ էր Անտոն Հայը, այնուամենայնիվ, Եվրոպայում տպագրությունն սկզբնավորվեց միայն 15-րդ դարում: Մինչ այդ, ինչպես նշեցինք, գրքերը կամ արտագրվում էին գրիչով, ինչը շատ դանդաղ եւ աշխատատար գործընթաց էր, կամ կրկնօրինակվում էին դրոշմներով, որոնք յուրաքանչյուր էջը տպելու համար հատուկ պատրաստած փայտե կտորներ էին: Գրքերը քիչ էին, դժվար հասանելի եւ շատ թանկ: Գուտենբերգի գյուտից հետո իրավիճակն սկսեց փոխվել: Առանց այս գյուտի զանգվածային գրագիտությունն ու կրթությունն անհնար կլինեին: Իսկ Օսմանյան կայսրությունում մինչեւ 19-րդ դարի երկրորդ կեսը գրքերի արտադրությունը մեծամասամբ կատարվում էր արտագրման եղանակով: 18-րդ դարում Ստամբուլում կար ձեռագիր գրքեր գրող շուրջ 80 000 մարդ:

Օսմանյան բռնատիրության՝ կորզող բնույթի պայմաններում տպագրահաստոցի նկատմամբ սուլթանի թշնամական վերաբերմունքը հասկանալը հեշտ է: Գրքերը գաղափարներ են տարածում եւ ավելի բարդացնում հասարակության նկատմամբ հսկողությունը: Ուստի օսմանյան սուլթաններն ու կրոնական առաջնորդները վախենում էին հետագա ստեղծարար հանրությունից: Նրանց լուծումը տպագրությունն արգելելն էր:

Ահա այսպիսի իրավիճակում էր գտնվում Արեւմտյան Հայաստանը տպագրության ստեղծումից հետո Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Սակայն, հուրախություն մեզ, պետք է փաստենք, որ անգամ սուլթանական Թուրքիայի նման վերաբերմունքը չկասեցրեց հայ մտքի թռիչքը, որը տպագրության միջոցով հասանելի էր դառնալու ամեն մի հայի: Այսպես. տպագրության ստեղծումից ընդամենը 67 տարի անց՝ 1512 թվականին, Վենետիկում Հակոբ Մեղապարտը սկզբնավորում է հայկական տպագրությունը: Իր հիմնադրած առաջին տպարանում նա լույս է ընծայում հինգ գիրք՝ «Պարզատոմար», «Ուրբաթագիրք», «Պատարագատետր», «Տաղարան», «Աղթարք»: Մեղապարտի գործը եւ ավանդները շարունակում է Աբգար Թոխատեցին, որը 1560-ական թվականներին նախ Վենետիկում, ապա Կոստանդնուպոլսում լույս է ընծայում նոր գրքեր՝ «Փոքր քերականություն», «Ժամագիրք», «Պատարագամատույց», «Տաղարան» եւ այլն: 1666 թվականին Ոսկան Երեւանցին լույս է ընծայում հայերեն առաջին Աստվածաշունչը, իսկ 18-րդ դարի վերջերից աշխարհի տարբեր քաղաքներում սկզբնավորվում եւ ծավալվում է հայ լրագրությունը: 1794 թվականին ստեղծվում է «Ազդարար» պարբերականը՝ Հնդկաստանի Մադրաս քաղաքում (խմբագիր-հրատարակիչ՝ Հարություն Շմավոնյան), 1843 թվականից «Բազմավեպ» հանդեսը՝ Վենետիկում, որ շարունակում է հրատարակվել առ այսօր, 1858 թվականից «Հյուսիսափայլը»՝ Մոսկվայում, 1859 թվականին «Արեւմուտք» հանդեսը՝ Փարիզում: Հետագա տասնամյակներում եւ հաջորդ դարում եւս, աշխարհի չորս ծագերում, Հայաստանում եւ Սփյուռքում, հիմնվում են բազում թերթեր, հանդեսներ, տարեգրքեր:

Շնորհիվ այս ամենի՝ մենք ունեցան հարուստ մշակույթ, արվեստ ու գրականություն: Եվ ինչպես Թումանյանն է ասել. «Թվական մեծությունը գուցե անհրաժեշտ է մեծ պատերազմներով ազգեր եւ աշխարհներ կործանելու համար, իսկ գրականության ու գիտության մեջ, որ նույնպես մի մեծ պատերազմ է, պատերազմ լույսի ու հավատի, խնդիրը վճռում է ժողովրդի բարոյական մեծությունը»:

Դարեր շարունակ մեր ժողովրդի «բարոյական մեծության» արգասիք մեր գրականությունը եղել է հավատարիմ եւ ճշմարիտ պատկերը մաքառումով մեր հարատեւման, մեր ինքնության, մեր հոգեւոր աշխարհի եւ հայոց ոսկեղենիկով արարչագործված խոսքարվեստի: Հայ հին գրականության առաջին մատյաններից մինչեւ մեր ժամանակի նորագիր մատյանները՝ մինչեւ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի», Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհի», Պարույր Սեւակի «Եղիցի լույս» եւ այլոց գրքերն ու գործերը, իրենց մեջ ամփոփում են մեր ժողովրդի կյանքի պատմությունը: Իհարկե, մեծագործությունը նախ Մաշտոցինն էր: Սկիզբը, ստեղծողը մեզ հասած հայոց տառերի ու հայատառ գրականության, որ նախ Սուրբ Գրքի թարգմանական տողերով գրառվեց, ապա՝ Բարձրյալին ձոնված հոգեւոր երգերով:

Հետո պետք է արագորեն ծաղկեր թարգմանական արվեստը, եւ մեր պատմությունը պիտի գրվեր շատերի կողմից, որոնք սոսկ պատմիչներ չեղան, այլ՝ գեղագետ պատմիչներ, որոնք մատենագրեցին մեր պատմությունը, կերպավորեցին հիշատակության արժանի շատ գործեր ու հերոսների: Եվ Ագաթանգեղոսի, Փարպեցու, Եղիշեի, Բուզանդի ժամանակներում Խորենացին էր, որ պսակվեց «քերթողահայր» տիտղոսով: Նա հին բանահյուսությամբ ավանդված երգ ու զրույցների, առասպելների ու վիպերգերի, օտարազգի պատմիչների երկերի, աստվածաշնչյան աշխարհապատումի խորամիտ զննությամբ եւ համադրումով ստեղծեց «Հայոց պատմությունը»՝ սկսելով հայ ժողովրդի ծագումից մինչեւ իր ապրած օրերը: Նրա ավանդները շարունակվեցին հետագա դարերում եւ հոլովվեցին այնպիսի անուններով, ինչպիսիք են Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Սայաթ-Նովան եւ այլն: Իսկ ահա Աբովյանով սկսած գրական նոր զարթոնքը մինչեւ նորագույն ժամանակները նորոգեցն հայ գրական պայծառ անունները, որոնց մեջ հավերժացան Թումանյանը, Իսահակյանը, Չարենցը, Սեւակը, Շիրազը, Սահյանը, Ռաֆֆին եւ շատ ուրիշներ: Էլ չենք խոսում այս ժամանակաշրջանի արեւմտահայ գրողների մասին, ինչպիսիք են Միսաք Մեծարենցը, Դանիել Վարուժանը, Պետրոս Դուրյանը, Ռուբեն Սեւակը, Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, որոնք, չնայած իրենց կարճատեւ եւ փոթորկալից կյանքին, անջնջելի հետք թողեցին հայ գրականության բազմադարյա պատմության մեջ:

Գնահատելով հայոց լեզվի դերը հայապահպանության հարցում՝ այսօր Հայաստանում պաշտոնապես նշվում է Մայրենի լեզվի օրը: Այս տարի եւս, այդ օրը՝ փետրվարի 20-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Էջմեկեան» հանրակրթական դպրոցում մեծ ոգեւորությամբ եւ ուրախ տրամադրությամբ նշվեց Մայրենի լեզվի օրը: Դպրոցի սաների կողմից անդրադարձ կատարվեց գրերի գյուտին, որն արտահայտվեց թատերական ներկայացմամբ, գեղեցիկ ասմունքով, հայկական խրոխտ պարով եւ հայոց լեզվի մասին ասույթներով: Դպրոցը հյուրընկալել էր ԿԳՆ լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանին, որն աշակերտներին հորդորեց լավ սովորել, ուշադրություն դարձնել իրենց խոսքին եւ հայախոսությամբ օրինակ դառնալ մյուսների համար:

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Մշակութային կյանքը սահմանամերձ Բերդավանում

ՏԱՎՈՒՇԻ թեմական կյանքը լի է ոչ միայն հոգեւոր, այլ նաեւ կրթական, մշակութային բուռն իրադարձություններով, որոնք իրականություն են դառնում հենց միաբանության նախաձեռնությամբ ու ջանքերով:

Փետրվարի 28-ին սահմանամերձ Բերդավան համայնքի մշակույթի տան սաները Թբիլիսի քաղաքում էին: Խումբը Վրաստան էր մեկնել հայրենանվեր առաքելությամբ՝ վիրահայերին փոխանցել սահմանաբնակ, հայրենասեր հայ զավակների ոգու ուժը եւ սերտ հարաբերություններ ստեղծել վիրահայերի եւ Բերդավանի բնակչության միջեւ: Բերդավանի համայնքապետ Սմբատ Մուղդուսյանի խոսքով՝ ուղեւորության նպատակն էր երեխաների մեջ սերմանել հայ մեծերի ավանդած լուսավոր արժեքները, որոնք պետք է փոխանցվեն սերնդեսերունդ:

Ոգեւորությամբ նշենք, որ այցը կազմակերպվեց Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանի, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանի ակտիվ ջանքերով, ինչպես նաեւ Վրաստանում ՀՀ դեսպանատան աշխատակիցների աջակցությամբ եւ օգնությամբ: Ինչպես համայնքապետը նշեց, այս ուղեւորությունը չէր կայանա, եթե չլիներ թեմի առաջնորդի գործուն միջամտությունը, ինչի համար նա իր գոհունակությունն ու երախտիքի խոսքն արտահայտեց:

Նշենք, որ Բերդավան համայնքը տեղակայված է Տավուշի մարզի հյուսիս-արեւելքում՝ մարզկենտրոն Իջեւանից 54 կմ հեռավորության վրա, Նոյեմբերյանի շրջանում՝ Կողբ գետի ափին: Նախկինում կոչվել է Դալաչա: Հայ-ադրբեջանական սահմանից հեռու է մի քանի մետր: Բերդը, որի անունը կրում է համայնքը՝ Բերդավան, կառուցվել է 10–11-րդ դարերում եւ վերականգնվել է 17-րդ դարում: Այստեղ կա հին խաչքարերի մեծ հավաքածու: Բերդավանին մոտ է գտնվում միջնադարյան Գալիջաքար (Ղալինջաքար) ամրոցը: Գրավոր աղբյուրներում Ղալինջաքար ամրոցն առաջին անգամ հիշատակվում է 1123 թվականին: 1983 թվականին ամրոցի տարածքը մաքրվել եւ բարեկարգվել է, քանդվել եւ վերաշարվել են պարսպապատերի եւ աշտարակների վերին հատվածները, վերականգնվել են հյուսիսարեւելյան երկու աշտարակները եւ այլն:

Համայնքի բնակչության մի մասը 18–19-րդ դարերում գաղթել է Արցախից: Այժմ համայնքն ունի մոտ 3500 բնակիչ: Բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու այգեգործությունն են:

Լինելով սահմանամերձ գյուղ՝ Բերդավանը, ինչպես սահմանամերձ մյուս գյուղերը, առավել ուշադրության, հոգեւոր սննդի կարիք ունի, որը մշտապես, անսպառ կերպով ստանում է թեմի հոգեւորականության կողմից:

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝ krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.03.2019 թ.
Տպաքանակը՝ 1175